ՌՈՄԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ
«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան
հին ձեռագրերի ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱԿԱՐԳԸ

11. «Պատմությունների» հասկացմանը հետամուտ ինչպիսի՞ մոտեցումը կարող է լինել «պատմությունների» համընդհանուր բնությանն ադեկվատ ու նախընտրելի, որ և հնարավորություն կընձեռի հասկանալ դրանք ճշմարտությամբ: Այս հարցի պատասխանը բացահայտելու համար հարկ է նախապատրաստվել: Ինչպե՞ս: Հարկ է նախ բացահայտել **պատմության բնությունը**: Ի՞նչ ասել է՝ «պատմություն»: Որո՞նք են պատմությունը որպես այդպիսին էացնող առանձնահատկությունները: Նկատենք, որ Մովսես Խորենացու աշխատությունը, ըստ էության, պատասխան է հենց այն խնդրակարգին, թե՝ **ի՞նչ ասել է պատմություն և կոնկրետորեն՝ հայոց պատմություն**: Նրա «Պատմութիւն Հայոց» երկում «պատմության բնության» և–կամ «պատմության որպես այդպիսին գոյության» սկզբունքային հարցադրումը ուղղակիորեն կոնկրետացած է որպես հարցակարգ, թե՝«ի՞նչ է» և «ինչպիսի՞ ինչ է» հայոց պատմությունը որպես այդպիսին իր գոյությունում, և «ինչպե՞ս» ու նաև «ինչո՞ւ համար» գոյություն ունի (պե՛տք է գոյություն ունենա) այն, որ կնշանակի, թե՝«ինչպիսի՞ն է» հայոց պատմության հենց որպես այդպիսին գոյությունը:

12. Ըստ Մովսես Խորենացու, **պատմությունը աշխարհի, որում և՝ կյանքի, նախկինում ու նաև ներկայում շարունակական եղելումի էականորեն նշանակալի իրադարձությունների ու գործերի կայացման *հերքերով՝* իսկություն ու իմաստության խորհուրդ որոնող մտքի ընթացք է և որպես այդպիսին՝ ուսումնասեր *հերազոյություն* և հենց սկզբունքորեն գիտելիք**: Այս տեսակետը իսկություն հայտող իր իրավասությունն է հաստատել, թեև դեռ ոչ **սկզբունքային կատարելությամբ, այն է՝պատմյալ ամենայնում առ Աստված առինքնող տեսական ու գործնական իմաստության վարդապետական կատարումով**, այլ՝ նշանակալի կերպով ու չափով, դեռևս անտիկ հույն պատմաբանների ու իմաստասերների աշխատություններում [23: 443–483]: **Պատմությունը ոչ թե աշխարհի և կամ կյանքի իրադարձությունների ու մարդկային գործերի՝ փոխկապակցված ընթացքով որպես այդպիսին կայացման *բուն եղելությունն է*, այլ՝ այդ ամենի իսկությունն ու իմաստության խորհուրդը, ըստ մարդկային կարողության, որոնող ու հասու *գիտելիքը***: Եվ այն անսխալ և–կամ ստույգ գիտելիք է, ուստի և՝ գիտական գիտելիք ու հենց գիտություն, այնժամ, այնկերպ ու այնչափ, հորժամ, որկերպ ու որչափ նրանում հասկացված ու բացահայտված է աշխարհի, որում և՝ բովանդակ կյանքի, իրադարձությունների, մարդկային գործերի ու կարգավորության իսկությունը: **Պատմությունը ներկայում է որպես (կյանքի եղելումի) իսկության հասկացման ու բացահայտման դիտավորություն ունեցող գիտելիք և որպես այդպիսին՝ ձգտում լինել ստույգ, անսխալ գիտելիք**: Պատմություն–գիտելիքը որպես այդպիսին գոյության իր կոչման հայտով, պոտենցիայով ու նաև

իրագործումով՝ ուղիով (հունով), կերպով ու չափով, է կայանում որպես գիտական գիտելիք և հենց գիտություն: Բացահայտել պատմության բնությունը և ուրեմն՝ պատմությունը որպես այդպիսին և հենց որպես գիտություն գոյացնող առանձնահատկությունները, կնշանակի՝ բացահայտել նրա ուսումնասիրության ենթակա **առարկայական տիրույթը** և **կատարումը**, որ և իրագործելի է սահմանման միջոցով:

13. Ո՞րն է **պատմության առարկան**, ո՞րն է պատմագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթը: Արիստոտելն այս առնչությամբ գրում է. «Պատմիչը և պոետը հենց տարբերվում են միմյանցից նրանով, որ առաջինը խոսում է իրական պատահումի, իսկ երկրորդը՝ այն մասին, ինչը կարող է պատահել» [16: 655] [17: 157]: Ըստ նրա, «պոեզիան առավելապես խոսում է ընդհանուրի մասին, պատմությունը՝ եզակիի» [16: 655]: «Ընդհանուրն այն է, որ ըստ անհրաժեշտության կամ հավանականության այս կամ այն ինչի [բնության]՝ պատշաճ է խոսել կամ անել այս կամ այն, ինչին և ձգտում է պոեզիան, տալով անուններ, իսկ եզակին այն է, օրինակ, թե **ինչ արեց** Ալկիվիադը կամ **ինչ պատահեց** նրան (ընդգծումները՝ Ռ. Ք.)» [16: 655]: Այսպիսով, ըստ Արիստոտելի, ի տարբերություն պոեզիայի, որի առարկան **հնարավոր պատահումն ու կատարումն է**՝ հնարավոր իրադարձություններն ու մարդկային գործերը, **պատմության առարկան՝ իրապես պատահածն ու կատարվածն է**, այսինքն՝ իրական ու եղելություն դարձած իրադարձություններն ու մարդկային գործերը: Արիստոտելյան այսկերպ բնորոշմամբ՝ պատմության առարկայի մեջ սկզբունքորեն ընդգրկվում է **ամենայն** եղելություն, այն սկզբունքային չափանիշով, որ իրապես տեղի է ունեցել և անհարկի է այն բացարկել, այլ՝ հարկ է հասկանալ ու պատմողաբար մեկնությամբ բացահայտել ամենայն եղելության իսկությունը:

Այդպիսի՞ն է, արդյոք, պատմությունը սկզբունքորեն, և կամ այդպիսի՞ն է, արդյոք, ամենայն պատմություն: Նկատենք, որ պատմության ուսումնասիրության ենթակա առարկայական տիրույթի՝ Մովսես Խորենացու հասկացումն ու բացահայտումը էականորեն տարբեր է: Ըստ նրա, պատմությունն առ ի քննություն ու խորհրդածություն, որպես անհրաժեշտ ու նաև նախընտրելի, ընտրում և առարկայական տիրույթում ընդգրկմանն **արժանի է դիտում** անցյալի ու նաև տվյալ ներկայի ոչ ամենայն իրադարձություն ու մարդկային գործեր, այլ՝ միայն նշանակալի [13,14: 4–21]: «… Հանդէս է մեր՝ ոչ զպատմութեանն ողջաբանութիւն գրել, այլ ջանալ ցուցանել զառաջինսն մեր և զբուն հին նախնիս» [8: 32]: Մեկ այլ տեղում՝ Նոյի երեք որդիների հետնորդ սերունդների անձանց, բնակության, գործերի ու ժամանակի վերաբերյալ այլ պատմիչների տարապատմություններում փոխզանազանվող ու նաև փոքրաչափ միայն նման ու ընդհանրական «ասվածը» քննությամբ վերապատմելը դադարեցնելով՝ նա գրում է. «Եւ այսոքիկ բաւական լիցին ասել այսչափ: Զի եթէ զամենայն եղեալսն յաշտարակագործութենէն մինչև առ մեզ ի հասողութիւն քեզ ի մերումս ածել ջանասցուք պատմութեան, ե՞րբ ապա յըղձալին քո հասանիցեմք զրուցաց պատմութիւնն. մանաւանդ զի և առաջիկայս մեր երկար է գործ, և ժամանակ մահկանացուաց սուղ և անյայտ: Այլ սկսեալ ցուցից քեզ զմերն, թէ ուստի՛ և ո՛րպէս» [8: 28]: Իսկ մեկ այլ էջում գրում է. «Բազում ինչ զկնի այսորիկ պատմի ի մատենին, այլ մեք՝ որ ինչ պիտոյն մերոյ հաւաքմանս է, շարեսցուք» [8: 37]: Ըստ Մովսես Խորե-

նացու, **ընդհանրապես՝ պատմության և հատկապես՝ հայոց պատմության առարկան մարդկային, որում նաև հայոց ազգի, ինքնության, կյանքի ու մշակույթի նշանակալի եղելումն է**:

Ի՞նչ է նշանակում «եղելում», և ինչո՞ւ է անհրաժեշտ ու նախընտրելի դիտվում ասել՝ «եղելում», այլ ոչ՝ «եղելություն»: «Եղելություն» հասկացությամբ առավելապես նշվում են տեղի ունեցած այն իրադարձություններն ու գործերը, որոնք ունեցել են սկիզբ, կայացման ընթացք ու ավարտ և անցյալ են այնչափ, որչափ սկզբունքորեն անցողիկ ու ներկայի նկատմամբ անցյալ կարող են լինել աշխարհի ու կյանքի՝ ժամանակի հարահոսությանը համընթաց իրողությունները, որոնք ըստ այդմ և կոչելի են որպես «անցքեր»: Առհասարակ, «անցքեր» կոչվում են բոլոր այն դեպքերը, որոնք առտնին իրողություններում սկզբունքորեն առանձնանում են որպես իրենց կարևորությամբ նշանակալի: Կարևորող այդ նշանակալիությունից զատ, «անցքերը», նախ և առաջ՝ ըստ իրենց անվանող բառի իմաստի, այնպիսի դեպքերն են, որոնց երկմիասնական՝ նյութեղեն ու իմաստային, բնությանն ու գոյության կերպին հատուկ է ժամանակի հոսքին հանձնված իրենց գոյության **նյութեղեն բաղադրատարրի անցողիկություն** ու կյանքի ներկայում՝ **ոչնչում** և երկրորդի՝ իմաստային **բաղադրատարրի, գրով չարձանագրվածության պարագայում՝ մոռացություն**: Միով բանիվ՝ «անցքերն» **իրենց ներհատուկ գոյության կերպում** հենց այնպիսի դեպքերն են, որոնց գոյությանը հատուկ է «ժամանակի ընթացքին կապանքված գերություն»: «Անցքերի» գոյությունը «տեղի» է ունենում որպես **ժամանակընթաց մի դիպում**, և որպես այդպիսին՝ մարդկանց ներկայում կամ կյանքի ներկայությունում իրենց պատահումից կամ դիպումից այնուհետ՝ դրանց գոյությանը հատուկ է հետզհետե ոչնչացող ու անգոյացող ընթացք կամ՝ հենց անմիջապես չգոյություն:

«Աշխարհի» ու «կյանքի» նախկինում տեղի ունեցած ու ներկայում մշտապես կայացող ու շարունակական գոյությունը, ի տարբերություն «եղելություն» հասկացության, առավել ադեկվատ ու ճշգրիտ բնորոշելի է «եղելում» հասկացությամբ: Արդարև, աշխարհում ու կյանքում իրենց ներկայությունը կարող են ունենալ նաև աստվածային իրողությունները, որոնց բնությունը նույնական չէ **այս աշխարհի ու այս կյանքի** ժամանակահոս բնությանը, և, թվում է, այդպիսի իրողությունների նկատմամբ կիրառելի չէ «եղելում» հասկացությունը: Հարկ է նկատել, որ այս աշխարհում ու կյանքում և հենց մարդկային ինքնությանը մատչելի նրանց գոյության կերպի նկատմամբ, որ կարող է իրագործվել որպես **միաժամանակ ներկայություն և ապա՝ անհետացում**, ևս կիրառելի է «եղելում» հասկացությունը, քանզի իրենց ներկայությունն իրագործելով և–կամ ժամանակի ու տարածության մեջ «տեղի» ունենալով որպես **լինող ու անցնող իրադարձություն**, մարդկանց կյանքում «տեղի» են ունենում նաև որպես **հավերժ մնայուն ու հենց գործուն նշանակություն**: Աշխարհի, որում և՝ կյանքի, ինչպես նաև դրանցում տեղի ունեցած ու դրանց բնությանը համապատասխան իրողությունների, գոյությունը նշելով «եղելում» հասկացությամբ, այդ բառի՝ ներկայում շարունակականություն արտահայտող «–ում» վերջավորությամբ նկատի է առնվում «մարդկանց նկատմամբ նշանակալիություն ունեցող» ամենայն «իրք» և «գործք»՝ ըստ իրենց համապատասխան գոյության կերպի, որոնք

տեղի ունենալով նախկինում, նաև ունեն բացություն ու գործուն նշանակալիություն և ուրեմն՝ իրենց **որպես այդպիսին գոյող ներկայակցության** հնարավորություն կամ իրագործություն մարդկային բանական հոգու, մտքի ու կյանքի համար՝ կա՛մ **սկզբունքորեն**, կա՛մ կոնկրետ տվյալ **ներկայի նկատմամբ**: Իսկ այդ կնշանակի, որ այդ իրողություններն այլևս սոսկ անցյալի եղելություններ չեն՝ տեղի ունեցած, ավարտված ու **զուտ անցյալում մնացած իրենց գոյության կերպով**, այլ՝ ունեն հասկացման ձգտող յուրաքանչյուր ներկայում իրենց **գոյության շարունակականություն**՝ որպես իսկ **ներկայում գոյող**, իրենց գոյողության (կամ գոյավորության) այդ կերպը կենագործելով սերունդների հասկացման կարողությանն իրենց իսկությունը հայտող իմաստով: Եվ նկատենք, որ հենց այդպիսի իրողություններն են, որոնք իրենց որպես այդպիսին գոյության իսկությունը հայտող իմաստով հղված են մարդկանց հասկացմանն ու ներկայանում են որպես արժանի պատմության մեջ ընդգրկման ու հիշատակության և ուրեմն՝ ընթերցող ու հասկացման ձգտող մարդկանց սերունդների յուրաքանչյուր ներկային՝ ներկայակցության: «Եղելում» հասկացության վերաբերյալ մինչ այժմ երբեմն ներանշանակ (իմպլիցիտ) և աստ նաև այսչափ բացորոշությամբ ծանուցումը բավ է, առավել խորին ու բովանդակ մանրամասներով մնացյալը բացորոշելու ենթակա ու հնարավոր տեսանելով մենագրության հետագա շարադրանքում՝ Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, որում ու նաև որով պատմության որպես այդպիսին գոյության իսկությունը, բացորոշելու խնդրակարգի ներկայացմանն ու լուծմանը հետամուտ մեր այս հետազոտության ողջ ընթացքում [20: 146, 149, 156–157, 187] :

Իսկ ինչո՞ւ է ասվում «մարդկային, որում նաև հայոց ազգի, ինքնության, կյանքի ու մշակույթի»: Չէ՞ որ մարդկային բնությունը համընդհանուր է, և այն, ինչ ասվում է որևէ ազգի ընդհանուր ինքնության և–կամ որևէ կոնկրետ անձի առանձնացող ինքնության ամբողջական անկրկնելիության վերաբերյալ, ասվում է՝ ի հավելումն համընդհանուրի: Արդարև, **մարդկային բնությունը համընդհանուր է մարդկանցից յուրաքանչյուրի** ու **ամենայն հնարավոր** և–կամ **արդեն իրականացած համախմբության** համար: Սակայն **մարդկային ինքնությունը, կյանքն ու մշակույթը** հարկ է անհրաժեշտորեն ու հենց նախընտրելի պիտոյականությամբ նկատի ունենալ որպես բաղկացյալ ու նախընտրելի բարեկարգությամբ ի մի կայացյալ **ամենայն անձանց ինքնությունների, կենաց ու մշակույթների՝ շնորհներով զանազանությունների հարստությամբ**: Եվ այն, ինչ ասելի է «մարդկային ինքնության», «կյանքի» ու «մշակույթի» վերաբերյալ, հարկ է ասել **ամենայն անձանց, կենաց ու մշակույթների ինքնությունների** հոգեկեցույց ու կենարար շնորհների զանազանությունների հարստության իսկևիսկ մարդասիրող ժողովումի, առ իմաստություն և ամենայն բարին ու առաքինություն ներկրթության, կատարելագործության ու պահպանության դիտավորություն, կերպարանում ու կատարում իրագործող խորհրդով, բանիվ և գործով:

14. Էական է նաև հասկանալ, որ պատմությունը գիտություն է ոչ միայն իր այն առանձնահատկությամբ, որ որպես ուսումնասիրության առարկա ունի աշխարհի, որում և՝ ամենայն հողեղեն արարածոց **այս կյանքի**, նշանակալի իրողությունները: Պատմությունը ներքուստ կայանում, հարկ է նաև ասել՝ առավել ևս կայանում ու կատարելագործվում է որպես գիտություն, երբ իմաստասիրում

է իր բնությունը, իրագործում է ներքին ռեֆլեքսիա՝ ինքնանդրադարձող խորհրդածություն, և իրագործելով **ինքնահասկացում** իր բնության կամ՝ որպես այդպիսին իր գոյության, բացահայտում է այն՝ հասկանալով ու սահմանմամբ բացահայտելով իր առարկան ու կատարումը: Թեև ինչպես գրում է Գուրևիչը՝«Պատմական միտքը հազվադեպ է ինքն իրեն անդրադարձել» [22: 189], այնուամենայնիվ, հազվադեպությամբ հանդերձ՝ նա այդ իրագործել է անտիկ շրջանից ի վեր, և հենց այդ է նրան կայացրել ու կատարելագործել որպես պատմագիտություն:

Պատմագիտությունը որպես այդպիսին է՝ ոչ միայն ուսումնասիրելով աշխարհի, որում և՝ այս կյանքի, նշանակալի եղելումը, այլև ասելիքի իսկության հանդեպ նաև հենց իր իսկության՝ հայեցողության, հասկացման ու մեկնողաբար ասման կերպի, ինքնահասկացմամբ ու կայացմամբ: Պատմության, ինքնահասկացմամբ հանդերձ, որպես պատմահայեցակարգ կայացման արդյունքում մշակվում է նաև մեթոդաբանությունը՝ սեփական մեթոդի բացորոշ ձևակերպմամբ ու իրագործմամբ: Եվ այդ կնշանակի, որ պատմագիտությունը որպես այդպիսին է, պատմելիք իսկությանն առդեմ իր ինքնահասկացման արդյունքում **ամենայն «հետքերի» ու «պատմությունների» (բոլոր եղելական ու նաև հնարավոր իդեական «պատմությունների»)** նկատմամբ ադեկվատ ու նախընտրելի մոտեցման հասկացմամբ, մշակմամբ ու իրականացմամբ:

Սկզբունքային նշանակություն ունի, և անհրաժեշտ ու նախընտրելի է հասկացման ու ամրագրության համար նաև այն, որ պատմությունն իր սկզբնավորումից ի վեր ոչ միայն որևէ կերպ ու չափ հասկանալով ու բացահայտելով կյանքի եղելումի իսկություն՝ ի պատում հյուսմամբ բանավոր և–կամ գրավոր շարադրել ու ներկայացրել է ամենայն «ընթերցասէր»–ի և «ուսումնասէր»–ի, այլև ի սկզբանե իրենում իրագործել է նույնորեն որևէ կերպ ու չափ **ինքնահասկացում**: Պատմությունն իրենից այլի (աշխարհի, որում և՝ կյանքի, նշանակալի իրադարձությունների ու գործերի) իսկության հասկացմանն առընթեր իրագործում է նաև ինքնահասկացում: Ընթերցասեր և ուսումնասեր ամենայն անձանց ավանդված՝ և՛ անտիկ շրջանի, և՛ միջին դարերի պատմական երկերում երբեմն պատմվում ու բացահայտվում է ոչ միայն իրադարձությունների ու գործերի որպիսությունը, այլև այս կամ այն չափ **բացորոշվում է պատմության բնությունը, այսինքն՝ թե ինչպիսին պետք է լինի պատմությունը որպես այդպիսին, որպեսզի ստույգ բացահայտի աշխարհի, որում և՝ այս կյանքի, նշանակալի եղելումի իրադարձությունների, գործերի ու կարգավորության՝ պատճառներով հանդերձ, իսկությունը**:

15. Պատմության ինքնահասկացման ու տեսության, որպես իսկ գիտություն կայացմանն ենք հաղորդ ու ընկալ դառնում նաև հայոց պատմատեքստային ավանդությանն առնչվելիս: Արդարև, Խորենացու «Պատմութիւն Հայոց»–ը ևս ***քննական պատմություն* է և դիտավորություն, կերպարանում ու կատարում ունի «հայոց ինքնության», բազմաբովանդակ կյանքի ու մշակույթի որպես այդպիսին եղելումի էական իրադարձությունների ու գործերի, կարգավորության առավելության ու նվազության՝ պատճառներով հանդերձ, իսկության քննական հասկացումը, մեկնողաբար բացահայտումը և ի գիր հյուսմամբ ներկայացումը**:

Աստ էական է նկատել, որ թեև ոչ ամենայն պատմություն և, այնուամենայ-

նիվ, ընդհանրապես՝ պատմագիտությունը և կոնկրետորեն՝ Մովսես Խորենացու հայոց պատմությունը, **դիտավորություն ունենալով հասկանալ իրենից արտաքո և ուրեմն՝ իրենից այլազան իրողության իսկություն, որպես հետազոտություն, գիտական գիտելիք և–կամ գիտություն, այլի հասկացմանն առընթեր՝ անհրաժեշտ ու նաև նախընտրելի պիտոյությամբ ինքնահասկանում է իր իսկությունը ևս:** Այս առնչությամբ նկատենք, որ մասնագիտական գրականության մեջ վաղուց ի վեր ճանաչում գտած ու հայտնի տեսակետ է այն, որ Մովսես Խորենացին սոսկ պատմիչ չէ, այլև պատմաբան: «Խորենացին այն հեղինակներից չէ, որոնք միայն վերարտադրում են իրենց կարդացածն ու լսածը: Նա ոչ միայն պատմիչ է, այլև պատմաբան. և գերազանցապես պատմաբան է» [11: 5, 146]: Հայոց տեքստամշակութային ավանդության մեջ պատմական երկերի շարքում հատկապես Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատությունն ընթերցելիս՝ հասու, հաղորդ ու ընկալ կարող ենք դառնալ ոչ միայն պատմվող բովանդակության, այլև նշանակալի չափով՝ պատմության ինքնահասկացման և որպես գիտություն ըմբռնման ու կայացման, որ և ունակ է, հնարավորում ու իրագործում է **հայոց կյանքի նշանակալի իրադարձությունների ու գործերի՝ պատճառներով հանդերձ, իսկություն բացահայտող քննական ու հենց ինքնաքննական պատմություն**:

Քանզի առարկայական իր տիրույթը կազմող եղելությունների նկատմամբ իր մոտեցման մեջ ճշմարտությամբ **քննական** լինելու համար պատմությունը հարկ է, որ նախ և առաջ լինի **ինքնաքննական**: Ինքնանդրադարձող ու ինքնահասկացող քննությամբ է, որ պատմությունը պոտենցիա ու ակտուալացում է ունենում սահմանել իր որպես այդպիսին ու հենց գիտություն էացնող հնարավորությունը, պայմաններն ու չափորոշիչները և, այդպիսով, կայանալ **կյանքի եղելումի իսկության նկատմամբ ադեկվատ ու նախընտրելի բացության, ստույգ հասկացման ու մեկնողաբար պատմումով ներկայացնելու կարողունակ որպիսությամբ**:

16. Կարելի է նկատել, որ Մովսես Խորենացու տեսակետն է հենց այնպիսին, ըստ որի՝ պատմությունը, որպես գիտություն, կոչված է, ունի դիտավորություն ու խնդիր՝

ա) հասկանալ ու մեկնողաբար բացորոշել աստվածային ու մարդկային իրողությունների աշխարհի, որում և՝ մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի նշանակալի եղելումի **իսկությունը**,

բ) դրան առընթեր քննության առնելով ու խորհրդածելով նույն այդ իսկությունը՝ հասկանալ ու մեկնողաբար բացահայտել, բանավոր և–կամ գրավոր հյուսմամբ՝ ներկայացնել նաև այդ իսկությունից իմանալի **իմաստության խորհուրդը**,

գ) **ինքնահասկանալ** իր որպես այդպիսին գոյության, այսինքն՝ իսկություն բացահայտող գիտական գիտելիքի ու գիտության գոյության, **հնարավոր, անհրաժեշտ ու հենց նախընտրելի** որպիսությունը:

Ըստ նրա, **պատմագիտության առարկա է նաև հենց ինքը պատմությունը**, և նրա աշխատության բազմաթիվ էջերում կան պատմության որպես այդպիսին գոյության խնդրի վերաբերյալ միմյանց փոխլրացնող ու պատմագիտական ամբողջական հայեցակարգ կյանքի կոչող մտորումներ:

Նկատենք, որ պատմագիտությունն իր իսկ կոչումն ու ակտուալացումը և ուրեմն՝ պատմության որպես այդպիսին՝ անհրաժեշտ ու նախընտրելի, կայա-

ցումն ուսումնասիրելով ու հասկանալով և ուրեմն՝ այդկերպ կայացման իմաստության խորհրդին հասու լինելով է ինքնահասկանում, որ իր ուսումնասիրության առարկայի որոշարկող առանձնացման մեջ սկզբունքորեն ունի **ընտրություն** և ուսումնասիրում է աշխարհի ու կյանքի ոչ համայն, այլ՝ **նշանակալի եղելումը**: Եվ գուցե ոչ ամենայն հետազոտող, այդ թվում՝ զանազան կանխադատություններով լցյալ ու «հարուստ» հոգով ու մտքով, ներքին ինքնաքննություն չիրագործող և ուրեմն՝ ոչ–ճշմարիտ կանխադատությունների ներգործությունը կասեցնելու ոչ հետամուտ հետազոտող անձինք, այլ՝ Մովսես Խորենացու երկում և–կամ երկով հայտնյալ իմաստության «ուսումնասէր» հայազգի կամ օտարազգի հետազոտողներ հնարավորություն ունեն հասկանալ, որ նրա աշխատությունում իրագործվել է **պատմության որպես այդպիսին գոյության *անհրաժեշտ ու նախընտրելի կերպի*** վերաբերյալ խորհրդածություն և ըստ այդմ՝ ընդհանրապես պատմության և մասնավորապես հենց հայոց պատմության **առարկայի ու կատարումի** որոշարկում:

Այսպիսով, ըստ Մովսես Խորենացու, **պատմագիտության ամբողջական ու մեկ–միասնական առարկան, ընդհանրապես, հենց ինքը պատմությունն է որպես այդպիսին և պատմության անհրաժեշտ ու նախընտրելի հասկաց[ված]ությամբ ու տեսությամբ՝ աշխարհի, որում և՝ կյանքի, նշանակալի եղելումը**: Եվ նույնորեն ու կոնկրետաբար կարելի է ասել նաև հայոց պատմագիտության վերաբերյալ: Ըստ նրա, **հայոց պատմագիտության մեկ–միասնական առարկան հենց ինքը պատմությունն է որպես այդպիսին և պատմության անհրաժեշտ ու նախընտրելի հասկաց(ված)ությամբ ու տեսությամբ՝ հայոց սեփական ու շրջակա աշխարհի, որում և՝ հայոց բազմաբովանդակ կյանքի, իրադարձությունների, գործերի ու կարգավորության նշանակալի եղելումը**:

17. Իսկ ո՞րն է **պատմության կատարումը**: Ի՞նչը պետք է հասկանալ որպես պատմության բուն անելիք ու հենց կատարում: Ո՞րն է այն անելիք–կատարումը, որ ընդհանրապես՝ պատմությունը ու հատկապես՝ նաև հայոց պատմությունը կարող է և հարկ է սկզբունքորեն անհրաժեշտ ու նաև նախընտրելի պիտոյականությամբ ինքնահասկանա ու իրագործի իր առարկայի նկատմամբ: **Պատմության, որպես գիտություն, կատարումը իր առարկայի *իսկության հասկացումն ու մեկնողաբար՝ բանավոր և–կամ գրավոր հյուսմամբ բացորոշումն ու ներկայացումն է*:**

Պատմության, որպես գիտության, կատարումը լիովին բացորոշելու համար, ի լրումն ասվածի, հարկ է վերստին ամրագրել, որ պատմությունը գիտություն է ոչ միայն այն առանձնահատկությամբ, որ կոչված ու հետամուտ է աշխարհի, որում և՝ կյանքի, իրողությունների **իսկության բացահայտմանը**, այլև **իր իսկ ինքնահասկացմանը**: Այլ կերպ ասած՝ **պատմագիտությունը** որպես այդպիսին է, ինքնանդրադարձող հասկացմամբ ու խորհրդածությամբ սկզբունքորեն իսկ բացահայտելով իր բնության, նույնն է թե ասել՝ որպես այդպիսին գոյության, իսկությունը: Եվ իհարկե, պատմագիտությունը հասու լինելով իր որպես այդպիսին գոյության իսկությանը և մեկնողաբար բացահայտելով այն, որպես այդ խնդրակարգի բաղկացուցիչ ու լրումի բերող նպատակային խնդիր, բացահայտում է աշխարհի, որում և՝ կյանքի, նշանակալի եղելումի իսկությունը:

18. Մովսես Խորենացու պատմահայեցողությունն ու տեսական հայացքնե-

ը, ինչպես նաև պատմումի եղանակը, ոճը պայմանավորված չէ սուբյեկտիվությամբ, կամայականությամբ, այլ կերպ ասած՝ կամայածին ու ինքնակամ չէ: Այն **կազմակերպված է** ի համապատասխանություն խնդրո էության, կարելի է նաև ասել՝ խնդրո «բան»–ի, որն ի քննության է առնվում նրա պատմական երկում և ուրեմն՝ պատմության ու պատմագիտության նրա ուսմունքում: Այստեղ մենք առնչվում ենք իրադարձությունների ու գործերի իսկությունը հայտող իմաստն ու իմաստության խորհուրդը հասկանալ, ի պատում ու գիր հյուսել, որում և՝ մեկնողաբար բացորոշմամբ ամենայն «ընթերցասէր»–ի և «ուսումնասէր»–ի ներկայացնել ձգտող մտածողի **«պատրաստված»** լինելու այն ֆենոմենին, որի մասին մշտապես խոսում է Մ. Հայդեգերն իր աշխատանքներում, այն է՝ պատրաստ լինել՝ ունկնդրելու, լսելու և ի միտ առնելու համար լեզվով ասվողը, որում և–կամ որով՝ հասու ու ընկալ լինելու հայեցվող իսկությանը:

Ո՞րն է, այսպիսով, այն խնդրո առարկա՝«բանը», որն ի հայտ բերելու դիտավորությամբ՝ նրան համապատասխանեցված կարգով կազմակերպված է Պատմահոր պատմության ու պատմաբանության բովանդակ հասկացումն ու այդ հասկացման յուրահատկությունը: Ո՞րն է պատմության բուն հետազոտական խնդիրը, և–կամ ո՞րն է պատմագիտության ուսումնասիրության ենթակա բուն խնդրակարգը: Հետևելով հերմենևտիկայի տեսաբան ու փիլիսոփայական հերմենևտիկայի ռահվիրա Հ.–Գ. Գադամերի հայեցակարգում բացահայտված՝ հասկացման ու մեկնաբանության ֆենոմենի «հարց ու պատասխանային» կառուցվածքի մասին սկզբունքային դրույթին, հետազոտող–մեկնաբանի համար էական խնդիրը պետք է ձևակերպել հետևյալ կերպ. **ո՞րն է տեքստի և հասկացման ձգտողի ու մեկնաբանի համատեղ գործողությամբ հյուսվող այն առանցքային հարցադրումը և–կամ խնդրակարգը, որի պատասխանն է տեքստով ասվողը՝ տեքստով ուղղորդվող հասկացման ու մեկնաբանության արդյունքում ի հայտ եկող իմաստային հյուսվածքը** [21: 434–445, 12: 144–149]:

Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, որով և՝ հայեցվող հայոց ինքնության, կյանքի ու մշակույթի եղելումի իսկությունը հայտող իմաստ և այդ իմաստում՝ իմաստությունը, մեկնելու և ներկայացնելու տեսակետից, նրա **հայացքների ամբողջության նկատմամբ**, ըստ էության, որպես **առաջնային ու ծրագրային** հարցադրում է առանձնանում «ընդհանրապես՝ պատմության և հատկապես հայոց պատմության որպես այդպիսին գոյության իսկության բացորոշման» խնդրակարգը: **Պատմության, որպես գիտություն, բուն և բովանդակ խնդրակարգը *պատմության որպես այդպիսին գոյության իսկության բացորոշումն է*:** Այս բանաձևը կարելի է նաև վերաձևակերպել՝ նրանում և–կամ նրանով ասվածը ներքուստ առավել բացորոշելով: **Պատմության, որպես գիտություն, բուն և բովանդակ խնդրակարգը *պատմության որպես այդպիսին գոյության իսկության և պատմողաբար ասվածում պահյալ իմաստության բացորոշումն է*:**

Ասվածը հիմնականում նույնորեն կարելի է կոնկրետացնել նաև հայոց պատմագիտության նկատմամբ: Այն հարցին, թե ո՞րն է հայոց պատմագիտության կամ պատմության, որպես, գիտության, բուն խնդրակարգը՝ ըստ Մովսես Խորենացու, պատասխանը հետևյալն է՝ **հասկանալ և մեկնողաբար բացորոշել սկզբունքորեն պատմության և, մասնավորապես, հայոց պատմության որպես այդպիսին**

գոյության իսկությունը և պատմողաբար ասվածում պահյալ ու նույն այդ ասվածով նաև հայտնյալ *իմաստությունը*:

19. Պատմության խնդրակարգի բանաձևում միաձույլ ներկա ներքին հիմնախնդիրներից յուրաքանչյուրի տեսանկյունից «պատմության» ֆենոմենը **հայեցող** ու քննող **խորհրդածությունը**, այն է՝ իմաստախույզ հասկացմամբ մեկնողաբար բացորոշել և՛ սկզբունքորեն պատմության որպես այդպիսին, որում նաև որպես գիտություն, գոյության իսկությունը, և՛ պատմումի եղանակում ու նաև հենց պատմողաբար ասվածում պահյալ իմաստությունը, պատմության այլ **տեսանություն** և ուրեմն՝ **պատմության տեսություն** ու մերձիմացություն են հնարավոր դարձնում ու մատուցում մարդկային **հասկացման սիրուն**: Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը պատմության որպես այդպիսին գոյության իսկությունն ու իմաստության խորհուրդը հասկանալ ձգտող անձին ու **նախընտրելի ընթերցողին** հնարավորություն է ընձեռում, հասու և ընկալ դարձնում **զարմանալի ու առինքնող** տեսանության: Պատմությունը ներկայանում է մարդկային բանական հոգուն և նրա մտային զորությանն ու կարողությանը՝ պատմագիտության ոչ վաղ անցյալից՝ ժամանակակից մեր ներկային փոխանցված ու քարացած կաղապար դարձած **սովորականի** համեմատ **այլ** ու **անսովոր**կ երպավորությամբ:

Պատմության խնդրակարգի այս բանաձևին որպես պատասխան է ի հայտ բերվում նրա հայացքների ամբողջությունը, և սույն ու այլ ևս հրապարակումներով ներկայացվող հետազոտությամբ հնարավորություն ունենք հասկանալ, որ Մովսես Խորենացու պատմատեսությունն, ըստ էության, **ներքուստ հետևողականորեն կազմակերպված ու ծավալվող ամբողջություն է**: Եվ երբ նրա տեսության վերլուծության և մեկնաբանության ժամանակ նկատի ունենք սկզբունքային այս հարցադրումը, ըստ էության՝ խնդրակարգը, ապա՝ նրա պատմական երկում շարադրված պատմության ու նաև պատմագիտական ըմբռնումների ամբողջությունը ներկայանում է որպես **պատմության սկզբունքային դիտավորության հետևողական կատարում, որ և իրագործվում է սույն հոդվածի շարադրանքում իր բանորոշ ձևակերպումը ստացած՝ պատմության խնդրակարգով սահմանվող իմաստային տեսադաշտում**: Նկատվում է, որ պատմության բուն խնդրակարգի բանաձևում ներկա է և՛ պատմության առարկայի, և՛ պատմության կատարումի որոշարկումը: Ինչո՞ւ: Բանաձևում ներկա է պատմության առարկայի ու կատարումի համար սկզբունքորեն հիմնայինը՝ **պատմության, որպես գիտության, ուղղակի կոչումն ու ըստ կոչման՝ գոյությունը, այն է՝ հասկանալ, մեկնողաբար բացահայտել և ի գիր հյուսմամբ ներկայացնել աշխարհի, որում և՝ կյանքի, նախկին ու նաև ներկա նշանակալի եղելումի իսկությունը**:

20. Վերոբերյալ բանաձևով հասկանալի է դառնում ու բացորոշվում, որպես **նույնը**, նաև Մովսես Խորենացու պատմագիտական ու պատմափիլիսոփայական հայացքների վերաբերյալ իմ այս ու այլ ևս գիտական հրապարակումների ամբողջական ու մեկ–միասնական դիտավորությունը՝ հասկանալ և մեկնողաբար բացորոշել սկզբունքորեն պատմությունը և, մասնավորապես, հայոց պատմությունը՝ ըստ իր **բուն խնդրակարգի**, ասել է թե՝ իր իսկ ներքին ու սեփական, հիմնարար ու որպես այդպիսին էացնող խնդրակարգի և ուրեմն՝ դրա լուծման դիտավորությունը, կերպարանումն ու կատարումն ունեցող պատմումի եղանակի և պատմվող բովանդակության: Իսկ այդ կնշանա-

կի, որ պատմության դիտավորության, պատմելիքի և պատմումի վարդապետական եղանակի վերաբերյալ քննա–մեկնողական խորհրդածությունների բոլոր այդ հրապարակումներով ներկայացվող ամբողջական հետազոտության դիտավորությունն ու կատարումը նույնն է՝ փոքր–ինչ հավելմամբ, և այդ հավելումը վերաբերում է «պատմումի վարդապետական եղանակի իսկության բացահայտմանը»:

«Պատմումի վարդապետական եղանակի իսկության բացահայտման» առնչությամբ էական է ամրագրել հետևյալ դիտարկումը: Առհասարակ, պատմությունն ինքնին չունի դիտավորություն՝ ուղղակիորեն հաղորդել նաև պատմումի եղանակի իսկություն: Ինչո՞ւ: Ինչպե՞ս հասկանալ ասվածը: Ըստ փիլիսոփայական հերմենևտիկայի տեսաբան՝ Հ.–Գ. Գադամերի [20: 36, 19: 138, 21: 463], լեզվի կոչումն է՝ լուծվել ու անհետանալ ասվողում: Եվ ինչպես լեզվագործունեությունում լեզվի կոչումն է՝ ինքնամոռաց նվիրումը, «ինքնազոհաբերությունը», այսինքն՝ խոսելով, «ասելով»՝ լուծվել ու անհետանալ ասման բերվող «բանում», այնպես էլ՝ բուն պատմումի եղանակի կոչումն է՝ լուծվել ու անհետանալ ասման բերվող իսկությունը հայտող իմաստում: Պատմումի վարդապետական եղանակը պատմելիք իսկության բանավոր և–կամ գրությամբ շարադրյալ ասմանն իր կոչման մեջ սկզբունքորեն կարող է և ճշմարտությամբ կայանում է՝ ինքնամոռաց նվիրումով ու «ինքնազոհաբերությամբ» լուծվելով ու անհետանալով ասված իմաստում: Նաև սույն գիտական երկում իրականացվող պատմության մեկնության կոչումն է՝ ինքնամոռաց նվիրումն ու ինքնազոհաբերությունը, լուծվելն ու անհետանալը ասման բերվող իմաստում [12: 173–174]: Սակայն «ընթերցասէր» և (իմաստության) «ուսումնասէր» ամենայն հետազոտողի ու նաև հենց միջնադարագետի համար՝ «իսկություն հայտող իմաստության խորհուրդ» իրենում պահող աղբյուր է նաև պատմումի կերպը կամ եղանակը, ուստի և՝ առանձնահատուկ դիտավորություն է պատմումի վարդապետական եղանակի իսկության և իմաստության խորհուրդի բացահայտումը: Ահա թե ինչու այս ու նաև այլ հրապարակումներով, որպես բաղադրամասերով, ամբողջացող առաջիկա իմ մենագրության **դիտավորությունն ու կատարումն է՝ հասկանալ և մեկնողաբար բացորոշել սկզբունքորեն պատմության և, մասնավորապես, հայոց պատմության որպես այդպիսին գոյության իսկությունը, որում և՝ պատմումի կերպում ու պատմողաբար ասվածում՝ պահյալ և, միաժամանակ, նույն այդ պատմումի կերպով ու պատմողաբար ասվածով՝ նաև հայտնյալ իմաստությունը:**

Հասկացման ձգտող յուրաքանչյուր ընթերցողին և գիտական ընկերակցությանը ներկայացվող այս խորհրդածությունների ուղղորդվածության և ուսումնասիրության ենթակա «բան»–ի այդպիսի ընտրությունն ու դիտավորությունը ամենևին էլ պատահական ու կամայածին չէ: Իր աշխատության էջերում մտորելով, թե ինչպիսին պետք է լինի պատմությունը, և նրա նախընտրելիորեն պիտոյական կերպը որոշարկող սկզբունքային ու հենց հայեցակարգային նշանակություն ունեցող մտքեր արտահայտելով, Մովսես Խորենացին ինքն է մեզ հայտնացույց անում, որ իր պատմությունը հյուսելիս՝ խորհրդածել է **պատմության որպես այդպիսին գոյության իսկության վերաբերյալ:** Ըստ իս, «սկզբունքորեն պատմության և, մասնավորապես, հենց հայոց պատմության որպես այդպիսին գոյության իսկության բացահայտության» այս բովանդակ խնդ-

րակարգը՝ իր բաղկացուցիչ խնդիրների ներքին փոխկարգավորությամբ և մեկ–միասնական ամբողջականությամբ, ներկայանում է որպես **Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատության սկզբունքային ու հիմնային խնդրակարգ**: Եվ նրա աշխատությունում այն ամենը, ինչը կարող է բացահայտվել որպես սկզբունքորեն պատմության և, մասնավորապես, հայոց պատմության որպես այդպիսին գոյության առանձնահատկություն, ներկայանում է և հարկ է հասկանալ նաև հենց որպես նրա պատմագիտական ու նաև պատմափիլիսոփայական հայեցակարգի առանձնահատկություն:

Ըստ իս, այս խնդրակարգը ներկայանում է՝ պատմագիտությունն ու պատմափիլիսոփայությունը իրենց իսկությունն իրենցում ունեցող գոյությամբ և ուրեմն՝ **իսկական ու հենց սեփական գոյությամբ** հաստատող խնդրակարգ: Կարելի է նաև ասել այլ կերպ. այս **խնդրակարգը ներկայանում է պատմագիտության ու պատմափիլիսոփայության գոյությունն իրենց իսկության մեջ հաստատող խնդրակարգ**: Իր այդ բնույթով այն ներկայանում է՝ գիտական պատմությունը և հենց պատմագիտությունն ու պատմափիլիսոփայությունը որպես այդպիսին էացնող, իրենց անհրաժեշտ ու նախընտրելի, կնշանակի նաև՝ կատարելագործության ուղղորդված, գոյությունը կայացնող խնդրակարգ: Բովանդակ այս առանձնահատկությամբ վերոբերյալ խնդրակարգն, արդարև, ներկայանում ու հասկանալի է որպես պատմագիտության ու պատմափիլիսոփայության իսկորեն **սեփական**ի նդրակարգ:

21. Այս աշխատության մեջ իմ վերոնշյալ ընտրությունն ու դիտավորությունը՝«հասկանալ և մեկնողաբար բացորոշել սկզբունքորեն պատմության և, մասնավորապես, հայոց պատմության որպես այդպիսին գոյության իսկությունը, որում և՝ պատմումի կերպում ու պատմողաբար ասվածում՝ պահյալ և, միաժամանակ, նույն այդ պատմումի կերպով ու պատմողաբար ասվածով՝ նաև հայտնյալ իմաստությունը», պատահական ու կամայածին չէ ոչ միայն այն պատճառով, որ այդպիսին է նաև Մովսես Խորենացու դիտավորությունն ու ավանդը ընթերցող սերունդներին՝ **հասկանալ, խորհրդածել ու մեկնողաբար բացորոշել պատմության որպես այդպիսին գոյության երկուստեք՝ և՛ ամենայն ազգերի ու հենց հայոց կյանքում պատմագիտության ինքնին, և՛ կոնկրետորեն հայոց ինքնության ու կյանքի նշանակալի եղելության՝ պատճառով հանդերձ, ու նաև այդ իսկ նշանակալիության իսկությունն ու իմաստությունը**: Ընտրությունն ու դիտավորությունը պատահական ու կամայածին չէ նաև այն հիմնավորությամբ, որ սկզբունքորեն այդպիսին է **հասկացման ու ինքնահասկացման ներքուստ կապակցված՝ անհրաժեշտորեն միմյանց փոխպահանջող ու փոխներգործող և հենց փոխճշմարտող հարաբերակցությունը**, և, ըստ բնական կարգի, այդպիսին է իմաստությանը ներկրթության պիտոյական ընթացքն ու նախընտրելի իսկությունը:

22. **Պատմության գոյությունը ոչ միշտ է կայացել ըստ իր կոչման, ուստի և՝ այն ոչ միշտ է կենագործվել իր իսկությունն իրենում ունեցող լինելությամբ, կամ որ նույնն է՝ իր իսկական գոյությամբ**: Մարդկանց ազգերի պատմության ողջ ընթացքից, այլ ոչ որպես բացառություններ տեսնվող առանձին պատմական ժամանակաշրջաններից, ինչպես նաև հենց մեր ոչ այնքան վաղեմի անցյալից կարելի է հիշել քաղաքական ինքնակամ պրագմատիկայի շահերով, մտայնություններով և

գաղափարախոսություններով **պատմության այլակերպվածության**, այդ բոլորի նկատմամբ **սպասարկու** կարգավիճակով պատմության գործառնության ոչ սակավաթիվ դեպքեր: Պատմության գոյության այսկերպ ակտուալացումները մարդկային բանական հոգու մտային և գիտելիքային կազմակերպվածության մեջ մշտապես հարցադրել և մշտարթուն են պահել **պատմության գոյության խնդիրը:**

Պատմության գոյության պոտենցիայի և եղելական դրսևորումների միջև մշտապես տեսանելի անհամապատասխանությունը և այս առումով՝ պատմության՝ իր գոյության մեջ երկփեռեկվածությունը, պոտենցիայի և այլայլված ու թյուրախեղված ակտուալացումների կերպերի, որ նաև կնշանակի՝ իմաստների, ոչ նույնությունը կամ ոչ միաբանությունն ի միտ առնելով, հարցականի կարգում է տեսնվում պատմության գոյության որպիսությունը: Օբյեկտի՞վ է, արդյոք, թե՞ սուբյեկտիվ **պատմության գոյությունը**: Ունի՞, արդյոք, օբյեկտայնություն, այսինքն՝ օբյեկտային հենա–կամ հիմնադրություն պատմությունը, որի դեպքում իր այդ օբյեկտի ու իր օբյեկտայնության հասկացվածությունն է «պատմություն» ամբողջական հասկացությունը՝ իր հայեցակարգային ու բովանդակային ամբողջականությամբ ու մեկ–միասնականությամբ, թե՞ այն առավելապես սուբյեկտայնություն է՝ սուբյեկտով ու նրա ինքնակամությամբ պայմանավորված ու կազմակերպված, պատմիչ անձի այս կամ այն շահերով կամայածին, կարծիքին հենացյալ մտքի շարժով հյուսվող իր պատումային ու իմաստային կերպավորությամբ: Ինչպե՞ս է հնարավոր ու նաև հենց նախընտրելի՝ պատմության գոյությունը որպես այդպիսին: Ինչպիսի՞ն է պատմության գոյությունը՝ ըստ իր կոչման: Ինչպե՞ս է բացահայտելի պատմության՝ ըստ իր կոչման, և ուրեմն՝ ըստ ինքյան, գոյության իսկությունը:

23. **Պատմության խնդրակարգի վերոբերյալ սկզբունքային բանաձևն ունիվերսալ է**: Ամենայն ժամանակներում՝ անտիկ շրջանում, միջին դարերում, … ու նաև այժմյան ներկայում այն ունի իր **հիմնարար, էացնող և հենց այդկերպ՝ էական** նշանակալիությունը աստվածային ու մարդկային իրողությունների վերաբերյալ բոլոր հնարավոր աստվածաբանական ու մարդաբանական և, անշուշտ, մարդկային կյանքի եղելումի իսկությունը, մարդկային կարողությանը հասանելի ստուգությամբ, իմաստասիրող և **իմաստության գիտեցմանն ուղղորդված** և ուրեմն՝ պատմագիտության ու պատմափիլիսոփայության՝ որպես այդպիսին, **գիտական** խորհրդածությունների համար: Պատմության խնդրակարգի այս ունիվերսալ բանաձևն իր այդպես ձևակերպմամբ՝ «պատմության որպես այդպիսին գոյության իսկության բացորոշում», իր սկզբունքային ու հիմնարար նշանակալիությունն է բացահայտում նաև ամենայն իրողությունների իսկության՝ ըստ քրիստոնեական վարդապետության հայեցողության, հասկացման մեջ: Իսկ այդ կնշանակի, որ վերոբերյալ խնդրակարգն ունի իր սկզբունքային ու հիմնարար նշանակության պոտենցիա և իրագործվածություն նաև հենց միջնադարյան սուրբ հայրերի քրիստոնեական վարդապետության մեջ՝ մարդկային ինքնության, կյանքի ու հենց պատմության կոչման ու իսկության վերաբերյալ խորհրդածություններում ու կենագործումներում, ինչն այդ խնդրակարգի սկզբունքային ու հիմնարար նշանակության պոտենցիան ու ակտուալացումն ի ներկայության է կոչում հենց միջնադարագիտությունում:

24. Ըստ քրիստոնեական վարդապետության տեսանկյան, մշակույթի **և պատմության որպես այդպիսին գոյությունն** (իմա՝ իր իսկությունն իրենում ունեցող՝ պահող ու հայտող, և ուրեմն՝ իսկական գոյությունը) ու նշանակությունը մարդու կամ ազգի համար կարելի է սահմանել որպես **յուրաքանչյուր անձի ու մարդկանց ազգերի առինքնող և առաքինորեն կարգավոր, որով և՝ նախընտրելի ու առավել կատարյալ, հոգևոր լինելության հաստատմանն ու փրկությանը կոչված՝ ոգե–նյութեղեն կամ հոգե–մարմնավոր գոյությամբ օժտված՝ մտա–, հոգե– ու ձեռա–կերտ ավանդություն**: Մշակույթը և պատմությունը իմաստավորվում են որպես այդպիսին ու նաև սկզբունքորեն արժևորվում՝ **յուրաքանչյուր անձի ու մարդկանց ազգերի առինքնող և առաքինորեն կարգավոր, որով և՝ նախընտրելի ու առավել կատարյալ, հոգևոր լինելության հաստատման ու փրկության դիտավորությամբ կազմակերպված մարդկային հոգևոր կեցողության նկատմամբ ներկայավորվող իրենց պիտանիության և օգտակարության տեսակետից**:

25. Կարելի է նկատել, որ Մովսես Խորենացու **պատմագիտական հայեցակարգում պատմության կոչման, դիտավորության, ըստ այդմ՝ կերպարանման ու կատարումի և ուրեմն՝ պատմության գոյության ունիվերսալ խնդրակարգի համար հիմնորոշ է և հենց պատմության իսկությունն է ներկայության կոչում *մարդկային ու կոնկրետորեն հայոց ինքնության, կենսակերպի ու մշակույթի եղելական ու նաև նախընտրելի գոյության* կարիքային խնդրակարգը**: Մարդկանց ազգերի ու նաև հայոց կյանքում ոչ միայն միջնադարի, այլև բոլոր ժամանակների, ինչպես նաև մեզ համար ունիվերսալ այս խնդրակարգի, որում և՝ հայոց ինքնության, կենսակերպի ու մշակույթի եղելական ու նաև նախընտրելի գոյության կարիքային խնդրակարգի, նկատմամբ կողմնորոշվելու առումով էլ սկզբունքորեն էական է՝ անհրաժեշտ ու նախընտրելի, բացահայտել սուրբ Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը:

Էական խնդիրն, այսպիսով, այն է, թե նրա պատմագիտական հայեցակարգում **ինչպիսի՞ն է պատմության որպես այդպիսին գոյության իսկությունը**: Բոլոր ժամանակների ու նաև այժմյան ներկայի կարիքով պատմությանն առաջադրված այս խնդրի ունիվերսալությունն ի հայտ է բերում հայրերով մեզ ավանդված ժառանգության ժամանակակից, ինչպես նաև մշտական՝«մինչև ի կատարած աշխարհի» [Մատթ. ԻԸ, 20], նշանակալիությունը: Եվ այս առումով առինքնող ու նշանակալի է, բոլոր «ներկա» ժամանակներին նաև ժամանակակից՝ ս. Մովսես Խորենացու **պատմության քրիստոնեական ուսմունքը, որը հյուսված է ըստ աստվածաբանական սկզբունքների**: Այս հիմնադրությամբ՝ նրանում պատմվողն ի մի է բերված ու հաստատված որոշակի կարգավորությամբ: Խորենացու աշխատությունը **կարգավոր պատմություն** է՝ պատմության դիտավորության, նյութի ընտրության ու շարադրման հիմքերի, **անհատի ու ազգի ինքնության, կենսակերպի ու մշակույթի կարգավորման** խնդիրների նկատմամբ իր նշանակության տեսակետից կազմակերպված կայացումով:

26. Ամենևին էլ պատահական չէ, որ «պատմության որպես այդպիսին գոյության իսկության բացահայտման» խնդրակարգը վերընթանում է իմաստության հասկացմանն ու մեկնողաբար բացորոշմանը: **Գիտությունն այնժամ, այնկերպ ու այնչափ է գիտություն, երբ սկզբուն-**

քորեն դիտավորություն ու կատարում ունի հասկանալ ու բացահայտել իմաստություն: Ըստ իս, ընդհանրապես գիտության համար էական ու հիմնարար խնդիր է՝ հասկանալ և մեկնողաբար բացորոշել մարդկային հասկացման կարողությանը մատչելի իմաստությունը: Նույնաբար նաև հենց **պատմագիտության և պատմափիլիսոփայության համար էական ու հիմնարար խնդիր է՝ հասկանալ և մեկնողաբար բացորոշել պատմության տեքստերում և–կամ տեքստերով մարդկային հասկացման կարողությանը մատչելի իմաստությունը**: Ըստ այդմ՝ իմ այս ու նաև այլ գիտական հոդվածներով ներկայացվող հետազոտական ծրագրի ընտրությունն ու դիտավորությունն է՝ հասկանալ և մեկնողաբար բացորոշել Մովսես Խորենացու պատմական երկի տեքստում և–կամ տեքստով ընթերցողի հասկացման սիրուն ու խորհրդածությանը, ըստ մարդկային կարողության, մատչելի **իմաստությունը**: Քանզի իր **իսկությունն իրենում ունեցող և ուրեմն՝ իսկական ու կատարելության ձգտող գիտությունը հենց իմաստության գիտություն է:** Եվ եթե գիտությունն ու մասնավորապես՝ պատմական գիտությունը հետամուտ չէ իմաստության ու հենց իմաստության գիտություն չէ, ապա՝ չգիտի և որևէ ինչ ու չգիտի իսկություն, և այն ամենը, ինչը կարծում ու հավակնում է թե գիտի՝ սխալ գիտի: **Գիտությունն այնժամ, այնկերպ ու այնչափ է ճշմարտությամբ գիտություն, երբ ինքնահասկանում ու կայանում է որպես աստվածային ու մարդկային իրողությունների և–կամ ամենայն գոյի որևէ մասնավոր ոլորտի *իսկությունը հայտող իմաստի, որում և՝ իմաստության* գիտություն**: Եվ պետք է ասել, որ պատմությունը որպես գիտություն կամ պատմագիտությունը որպես այդպիսին են կայացնում այն պատմական ուսումնասիրությունները, որոնց սկզբունքային դիտավորությունը, կերպարանումն ու կատարումն արտահայտելի է վերոբերյալ բանաձևով՝ **հասկանալ և մեկնողաբար բացորոշել սկզբունքորեն պատմության և, մասնավորապես, հայոց պատմության որպես այդպիսին գոյության իսկությունը և պատմողաբար ասվածում պահյալ իմաստությունը**:

27. Երբ ասվում է պատմության որպես այդպիսին գոյություն, նկատի է առնվում երկուստեք և՛ բնույթով պարզ պատմությունները, որոնցում զուտ պատմվում է աշխարհի ու կյանքի այլ իրողությունների իսկությունը, և՛ ինքնահասկացող ու պատմաբանող բնույթի խորհրդածություններ ու հենց պատմագիտական հայեցակարգ իրենցում ևս պարունակող պատմությունները: Եվ էական է նկատել, որ **ամենայն պատմություն, որոնցում պատմվում է աշխարհի, որում և՝ կյանքի, իրադարձությունների և աստվածային ու մարդկային գործերի որպես այդպիսին կայացման իսկություն, ըստ էության, գոյաբանություն է:**

Պարզ պատմողական բնույթի պատմությունները գոյաբանական են, քանզի պատմությունների բնության սկզբունքային առանձնահատկությունն է՝ բանորոշ հասկանալ ու բացահայտել և մեկնողաբար՝ բանավոր և–կամ գրավոր պատմողական հյուսմամբ շարադրել ու ներկայացնել եղելությունների իսկություն: Եվ այն պատմությունները, որոնցում գիտակցորեն ու բանորոշ չի բացահայտվել պատմության բնությունը, այլ կերպ ասած՝ պատմության որպես այդպիսին գոյությունը, գոյաբանական են միայն պատմության սկզբունքային բնությամբ պայմանավորված և ուրեմն՝ այդչափ **սպոնտան** իրենց կատարումով:

Իսկ այն պատմությունները և այդ թվում՝ Մովսես Խորենացու «Պատմութիւն

Հայոց» երկը, որոնցում սկզբունքորեն ու առավել է կայացել եղելությունների իսկության բացահայտման հետամուտ ինքնակազմակերպվածություն, իրենց որակով առավել են գոյաբանական և որպես այդպիսին են ոչ թե սպոնտան իրենց կատարումով, այլ՝ արդեն նույնիսկ սկզբունքային դիտավորությամբ, ըստ դիտավորության՝ իրենց կերպարանումով և կատարումով: Պարզ պատմողական բնույթի պատմություններից առավել են որպես գոյաբանական ներկայանում այն պատմությունները և այդ թվում՝ Խորենացու պատմական երկը, որոնցում **եղելությունների իսկության բացահայտման խնդիրը գիտակցվել է պատմության համար հիմնարար ու առանցքային, ուստի և սկզբունքային դիտավորությամբ ու կատարումով իրագործվել է իսկության բացահայտմանը հետամուտ պատմության ինքնահասկացում ու պատմության բնության բացահայտում:** Դրանք առավել են գոյաբանական, քանզի դրանցում իրագործվել են պատմության հայեցակարգի, իմաստա– ու պատմա–հայեցման ուղղորդվածության, ինչպես նաև իրողությունների, որպես պատմարժան, ընտրության, պատճառներով հանդերձ հասկացման ու մեկնողաբար պատմողականության յուրովի և, սակայն, ոչ կամայածին ու ինքնակամ՝ [8: 57][1] , այլ՝ իսկությանը ներընկալու կարողությամբ այդ ամենի ներքին **կազմակերպում–կատարելագործում**:

28. Պատմության բուն խնդրակարգի վերոբերյալ բանաձևով պատմագիտական յուրաքանչյուր երկի ուսումնասիրությանը նվիրված աշխատությունների դիտավորություն կարող է ներկայանալ **պատմագիտական հայեցակարգի** հասկացումն ու մեկնաբանությունը: Եվ մասնավորապես, Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատության ուսումնասիրությանը կոչված սույն հոդվածի ու առաջիկա մենագրության ներքուստ բաղադրյալ և մեկ–միասնական դիտավորության առաջնային ու հիմնային բաղադրիչ է ներկայանում իմաստուն պատմաբանի **պատմագիտական հայեցակարգի** հասկացումն ու մեկնողաբար բացորոշումը:

Ընդհանրապես՝ պատմության և կոնկրետորեն՝ հենց Մովսես Խորենացու հայոց պատմության բուն խնդրակարգի հասկացման, բանաձևման ու մեկնողաբար բացորոշման դիտավորություն ունեցող այս հոդվածում կարևոր է նաև նշել, որ Մովսես Խորենացին պատմության իր տեսությունը և–կամ պատմագիտական հայեցակարգը ներկայացնում է իր աշխատության մեջ ոչ միահավաք ու մեկտեղյալ ամփոփությամբ, այլ՝ տեղ առ տեղ, զանազան էջերում սփռված՝ ուղղակիորեն և անուղղակիորեն շարադրելով իր հետազոտության դիտավորությունը, խնդրո նյութը, մոտեցումը, ձևակերպելով նաև պատմական ստույգ ճանաչողության ու գիտելիքի սկզբունքներ ու չափորոշիչներ: Նկատենք նաև, որ նրա պատմագիտական հայեցակարգի հասկացման ու մեկնաբանության համար շատ հաճախ հարկ է լինում խորհրդածող քննությամբ ուսումնասիրել նաև ոչ միայն ուղղակիորեն ասվածը, այլև, ըստ Ֆր. Շլայերմախերի «ունիվերսալ հերմենևտիկայի» տեսության, **ասման կերպը**: Քանզի պատմագիտական ընդհանուր հայեցակարգին առնչվող գիտելիք ներկա է և հայտնելու **հնարավորությամբ**՝ պահյալ է նաև բառային կամ իմաստային այլ միավորների կապակցման ու ամբողջական իմաստների հյուս-

1 «…Ոչ ինչ կամաց մտածական և ոչ ինչ անպատշաճ ի սմա յօրինելով բան» [8: 57]:

ման եղանակում՝ անհատական կերպերում և–կամ ընդհանուր կարգերում:

Սակայն, հասկանալի է նաև, որ նրա աշխատությամբ ասացյալից միայն պատմագիտական հայեցակարգի և սոսկ այդչափ բովանդակության բացորոշությունը կարող է լինել ոչ լրիվ ու հենց անկատար դիտավորություն, հասու չլինելով, թե հայոց ինքնության, կյանքի ու մշակույթի նշանակալի եղելությունների իսկությունը հաղորդող ի՞նչ իմաստ ու իմաստություն է այդ հայեցակարգի և–կամ մտքի տեսողությամբ բացահայտության կոչվում: Դիտավորությունը լրումի բերող կարող է նկատվել հերմենևտիկայի պատմական կայացման ողջ ավանդության, որում նաև «սուրբ հերմենևտիկայի»՝ միջնադարյան մեկնարվեստի, ու ժամանակակից փիլիսոփայական հերմենևտիկայի հնարավորությունների միահյուս կարողությամբ ու հայեցակարգով հասկանալ ու մեկնողաբար բացորոշել Մովսես Խորենացու **ոչ միայն պատմագիտական հայեցակարգը և նրանում իսկ՝ իմաստությունը,** այլև դրա հետ մեկտեղ հասկանալ ու մեկնաբանել նրա այդ հայեցակարգով մտովի **հայեցվածի ու ասման բերվածի իմաստը** և նույնիսկ այդ իմաստում՝ հասկացման ու մեկնաբանության խնդրակարգ սահմանել՝ ընթերցողի հասկացման սեր ու ջանք առ ինքն կոչող՝ **այլ անձանց կյանքի, ասել է թե՝ ընտրության, մտքի, խոսքի ու գործի, *իմաստության* բացահայտությունը**, և այս բոլորով ի մի՝ խորհրդածել, հասկանալ ու կենագործել **պատմության՝ որպես այդպիսին գոյության իսկությունը սկզբունքորեն**:

Ըստ պատմության խնդրակարգի՝ տեքստի իմաստասիրական քննություն ու խորհրդածություն իրագործելով, հասկացման ձգտող մարդկային բանական հոգուն ու մտքին Մովսես Խորենացու պատմաիմաստասիրության ուսմունքը ներկայանալի կարող է դառնալ որպես **պատմության իսկության հնարավոր** և նույնիսկ ավելին՝ **անհրաժեշտություն ու հենց նախընտրելի պիտոյականություն** տեսնվող մի բացորոշություն: Եվ ընդհանրապես՝ պատմության և մասնավորապես՝ հայոց պատմության որպես այդպիսին գոյության իսկության բացորոշումն իրենում նկատի ունի **թե՛ պատմագիտական հայեցակարգի իսկության բացահայտումը, թե՛ ըստ այդ հայեցակարգի բացության, տեսանության ու հասկացման, ապա և՝ մեկնողաբար հայտնողական զորության ու արվեստավորության, *մարդկային, որում և՝ հայոց ինքնության, կյանքի ու մշակույթի եղելումի բազմաբովանդակ իսկության* բացահայտումը, որ և՝ իր մեկ–միասնականությամբ ներկայանում է որպես նույն ինքը՝ *պայմություն–իմաստ* ու հենց *պայմություն–իմաստություն*:**

29. Պատմության խնդրակարգի, այն է՝ «պատմության որպես այդպիսին գոյության», բանաձևը կարող է կանխահասկացվել երկու հնարավոր և մտքի պատմության մեջ նաև իրագործված մեկնաբանություններով, այն է՝ **պատմությունը որպես «պատմում» և պատմությունը որպես «պատմվող» բովանդակություն**: Երկբնույթ այս մեկնաբանություններն առանձին–առանձին մասնավոր մեկնաբանություններ են: Այնինչ պատմության խնդրակարգի վերոբերյալ բանաձևում, երբ ասվում է «պատմության որպես այդպիսին գոյություն», ըստ իս, հարկ է նկատի ունենալ պատմության ոչ որպես սոսկ «պատմում» և–կամ որպես սոսկ «պատմվող բովանդակություն»՝ երկակի ու հենց երկփեռեկված, առանձին–առանձին մասնավոր մեկնաբանություններ: Պատմության

որպես այդպիսին գոյության իսկության ամբողջական լրիվության ու կատարելության, ըստ մարդկային կարողության, բացահայտման ճանապարհին **պատմումը և պատմվողը հասկացվում են որպես պատմության բաղադրատարրեր** և ուրեմն՝ պատմության այդպիսի մեկնաբանությունները, ըստ իս, հարկ է ճանաչել որպես անհրաժեշտ ու դեռ միայն մասնավոր իսկությունների բացահայտում: Բանաձևում պատմությունը ներկայանում ու հասկացվում է որպես **պատմումի և պատմվողի մեկ–միասնականություն**, և բացահայտել պատմության որպես այդպիսին գոյության իսկություն, կնշանակի՝ բացահայտել այդ երկուսի փոխհամապատասխանությամբ ու մեկ–միասնականությամբ՝ հասկացման ձգտող մարդկային հոգուն ու մտքին, ըստ մարդկային կարողության չափի, ներկայացող և հասկացվող իսկությունն իր լրիվությամբ: Ինչպե՞ս:

Ամենայն գոյի գոյությունը, աստվածային նախախնամությամբ, անթաքույց, ներմուտ ու մատչելի և որպես իսկություն՝ ներկայանալի ու հասկանալի է մարդկային ինքնությանը, բանական հոգուն ու մտքին՝ ըստ մարդկային կարողության: Եվ որևէ իրողության իսկության լրիվության, ըստ մարդկային կարողության, հասկացման հերմենևտիկական իրադրությունում որպես անհրաժեշտություն ու նախնտրելիություն է նշելի այն, որ **հասկացումը պետք լինի *համակերպ ու համաչափ՝* ըստ մարդկային կարողության ներկայացող իսկությանը**: Թեև հարկ է նաև խոստովանել, որ հաճախ հասկացումը չի լինում պատշաճ և ստույգ համաչափ՝ իսկության այդչափ անթաքչությանը, որի դեպքում էլ պատմությունը որպես «պատմում» կամ «պատմվող», կամ դրանց մեկ–միասնականություն՝ հաճախ կայացել է իր թերի կամ թյուր և հենց անիսկական գոյությամբ:

30. Ինչպես և ասվեց, պատմությունը որպես այդպիսին էացնող և հենց ըստ կոչման կայացնող կարևորագույն առանձնահատկությունը աշխարհի, որում և՝ կյանքի, նշանակալի եղելումի **իսկություն բացահայտելն է**: Պատմությունը որպես պատմում կարող է ներկայանալ որպես գիտական և–կամ գեղարվեստական, ընդսմին, յուրաքանչյուրը կարող է ներքուստ կայանալ նաև մյուսի առանձնահատկությունն իրենում ունենալով: **Իր սկզբունքային դիտավորությամբ ու կատարումով հենց որպես այդպիսին կայացած *գիտական պատմությունը* կարող է ներքուստ կայանալ նաև իր *պատմումի գեղարվեստականությամբ*: Իսկ իր սկզբունքային դիտավորությամբ ու կատարումով հենց որպես այդպիսին կայացած *գեղարվեստական պատմությունը* կարող է նաև ներ–կայանալ իրենում *պատմվողի գիտականությամբ*:** Արդարև, հեղինակի նախընտրության ու հենց ազատ ընտրության հարց է, և գեղարվեստական պատմությունը կարող է որպես այդպիսին ներ–կայանալ՝ իրենով պատմվողը գիտականության առանձնահատկությունից չզրկելով:

Հասկացման ձգտող ամեն ոք հնարավորություն ունի և հենց նախընտրելի է հասկանալ, որ և՛ որպես գիտական, և՛ որպես գեղարվեստական՝ պատմությունը բացահայտում է իսկություն: Գիտական պատմությունը բացահայտում է աշխարհի, որում և՝ կյանքի, նախկին և–կամ այժմյան ներկային մերձակա ու երբեմն ներկայում դեռ շարունակական եղելումի իսկություն, իսկ գեղարվեստական պատմումը՝ «երկի աշխարհի» կամ կարելի է ասել՝«հնարավոր աշխարհի» իսկությունը: Հոգու զգացմունքով՝ սիրո առավելությունից բխյալ, ոճով կերպա-

ցյալ ու անկեղծ բարբառով ասացյալը, որ և էացնում է մեծագույն ստեղծագործությունները որպես այդպիսին, զուտ «երկի աշխարհ» ու հենց «հնարավոր աշխարհ» է ներկայանում մարդկային երևակայությանն ու մտքին, և, այնուհանդերձ, հնարածո կերպյալ այդ աշխարհի մտային իրադարձությունում պահյալ ու ներ–կայացյալ իմաստության խորհրդով՝ «երկի հնարավոր աշխարհին» իր հերթին ևս առնչվում է բուն աշխարհի ու մարդկային ներքին ու արտաքին կյանքի պոտենցիայի ու ակտուալացումի իսկությանը:

Պատմության որպես այդպիսին գոյությունը կարող է ի խորհրդածություն մուտք գործել նաև զուտ որպես **խոսքի տեսակ** և որպես այդպիսին՝ գիտական կամ գեղարվեստական խոսքի տեսակ: Թեև ոչ անհրաժեշտորեն ու անպայմանորեն, այնուամենայնիվ, լիովին այլ կերպով կարող է ներկայանալ և, արդարև, մշակույթի պատմությունում իր այդկերպ ներկայության հստակ արտահայտություններն է ունեցել պատմության, որպես խոսքի տեսակ, դիտարկումն ու գործածումը հռետորությունում [4: 68–107], որում պատմության դիտավորությունը, կերպարանումն ու կատարումը, վերապահությամբ միջնադարյան ու այլ ևս ժամանակների քրիստոնեական հռետորության, **չի կայացել որպես իսկության հետամուտ բացահայտություն, այլ՝ ասվողի նկատմամբ սկզբունքորեն ու միանպատակ՝ ունկնդիրների հավանության արարում ու համոզում**, ընդ որում, անխտրաբար՝ իսկություն է, արդյոք, տվյալ «պատմություն» խոսքի տեսակը մասամբ և–կամ ամբողջությամբ, թե՝ անիսկություն:

Կոնկրետ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում պատմության որպես այդպիսին գոյության իսկության խորհրդածությունը, հասկացումն ու մեկնողաբար բացորոշումն իրագործվել է՝ պատմությունը ճանաչելով և իմաստության ամենայն «ընթերցասէր…, ուսումնասէր»–ին ևս այն ճանաչել տալով որպես իսկության բացահայտման ուղղորդված գիտություն: Նա պատմությունը քննության է առնում, խորհրդածաբար հասկանում, մեկնողաբար բացորոշում, ի գիր հյուսմամբ ներկայացնում, միով բանիվ՝ երկի բովանդակությունը կազմակերպում երկու հիմնախնդիրների միահյուս ուղղությամբ՝ բացահայտել պատմության, որպես գիտության, իսկությունը և գիտականորեն կազմակերպված հայեցողությամբ՝ հայոց ինքնության ու նախկին կյանքի նշանակալի եղելումի իսկությունը, ընդսմին, այդ ամենը կատարումի բերելով **իր պատմումի ոչ միայն գիտականությամբ, այլև արվեստավորությամբ**: Նրա պատմության դիտավորությունն ու կատարումն է՝ իմաստախույզ հասկացմամբ մեկնողաբար բացորոշել պատմության որպես այդպիսին գոյության իսկությունը, այսու և՝ այլոց պատմողաբար ասման կերպում ու բուն ասվածում պահյալ իմաստությունը և հենց հայոց ինքնության ու կյանքի նշանակալի եղելումի իսկությունը հայտող իմաստը և այդ իմաստում՝ հենց հոգեկեցույց ու կենարար իմաստությունը:

31. **Ամենայն գոյի և հատկապես մարդկային իրողությունների մասին խորհրդածելիս, հարկ է նկատի ունենալ, որ իրական է և՛ այդ գոյի՝ տվյալ պահին որպես այդպիսին կայացածությունը (ակտուալացածությունը)՝ մարդկային հասկացման կարողությանն իմանալի որպես նյութեղեն–իմաստային ֆենոմեն, և՛ այդ գոյի պոտենցիան՝ իմանալի դեռ որպես զուտ իմաստային ֆենոմեն:** Պատմության խնդրակարգի բանաձևում, այն է՝«պատմության որպես այդպիսին գոյության իսկության բացո-

րոշում», «պատմություն» ասելով անհրաժեշտ է հասկանալ և՛ պատմության պոտենցիան, և՛ պատմության ակտուալացածությունը: Մարդկային կյանքի իրադարձություններում ու գործերում, որոնցում ներկա է նաև «ընտրության» գործոնը, հարկ է նաև քննության առնել, թե իր պոտենցիային և հենց նախընտրելի հնարավորությանը որչափ ադեկվատ է կայացել տվյալ գործը, սոցիալականորեն և–կամ մշակութորեն նշանակալի իրողությունը:

Մովսես Խորենացին խորհրդածելով հայոց պատմության վերաբերյալ, նկատի ունի ընդհանրապես՝ պատմության և կոնկրետաբար՝ հենց հայոց պատմության ոչ միայն *ակտուալացած փաստականությունը*, այլև պատմության իմաստային *պոտենցիան*: Այդպես է միայն հնարավոր դառնում մարդկային և հենց հայոց ինքնության, կյանքի ու մշակույթի, բարեկարգության ինտենցիայի (միտումի) առումով, իմաստության ու կենսաբարության և–կամ անիմաստության ու ոչնչաբարության խորհուրդների բացահայտումն ու արժևորումը, հայոց կյանքի համար նշանակալի որևիցե խորհրդում, բանում և գործում մարդկային ընտրության, դիտավորության ու կատարումի դրվատումը և–կամ նշավակումը, որ բազմիցս իրագործվում է նրա երկի ողջ բովանդակությունում՝ ոչ որպես բազմադեպ ակցիդենցիա, այլ՝ որպես սկզբունքային հայեցակետ:

Ամենևին էլ պատահական չէ, որ Խորենացու խորհրդածություններում պատմության խնդրակարգի բանաձևը մեկնորոշվում է՝ «պատմության որպես այդպիսին գոյության իսկության բացորոշում» և ոչ այլ կերպ: Ինչո՞ւ չի ասվում, թե նա խորհրդածել է «պատմության իսկության» վերաբերյալ, այլ՝ որպես խնդրակարգի բանաձև, ասվում է՝ «պատմության որպես այդպիսին գոյության իսկության»: Պատմության իր տեսությունում նա հետևում է ոչ սոսկ և ոչ այնքան արիստոտելյան, որքան ու հենց սկզբունքային դիտավորությամբ՝ պլատոնյան հետազոտական ուղուն և ծրագրին: Պատմության նրա տեսությունը զուտ **եղելական**, մինչ այդ գրված ու առձեռն բոլոր պատմությունների տեսությունների քննական ուսումնասիրությամբ և էական հատկությունների իմացությամբ՝ **ընդհանրացող և այսկերպ՝ ընդհանուր տեսության** բացորոշություն և դրանց իսկության վերահաստատում չէ, ինչպես որ իր աշխատություններում հետազոտության խնդրո առարկաների նկատմամբ իր հետազոտական ուղին է իրագործում Արիստոտելը [3: 100][1]: Պատմության նրա հայեցակարգը չի հիմնվում միմիայն «պատմության» որպես այդպիսին եղելական գոյության իսկության բացահայտման վրա: Պատմության իր տեսության մեջ Խորենացին ուղղակիորեն բացորոշ և–կամ ներանշանակ (իմպլիցիտ) պատասխանում է ոչ սոսկ այն հարցին, թե՝ «ինչպիսի՞ն է պատմությունը» և ուրեմն՝ Արիստոտելին հանգունակելով՝ սոսկ նկատի ունենում, թե էական հատկությունների իրենց ընդհանրության մեջ ինչպիսին են պատմության այս կամ այն արդեն **եղելական** դարձած բոլորաքանակ կոնկրետ տեսությունները և–կամ

[1] Ասվածի հստակ արտահայտություն և օրինակ կարելի է նկատել քաղաքականության վերաբերյալ Պլատոնի և Արիստոտելի աշխատությունների մակագրության, դիտավորության ու կատարումի սկզբունքային զանազանությունում, որ և բացորոշում է Դավիթ Անհաղթը. «Պլատոնը եզակի է մակագրում՝ Քաղաքականություն (Պետություն), իսկ Արիստոտելը հոգնակի՝ Քաղաքականություններ (Պետություններ), այսու և՝ դիտավորությունները զանազան են: Քանզի Արիստոտելն ասում է, թե ինչպես էին քաղաքականություն վարում նախնիները, այսինքն[a] արգիացիները, բիովտացիները և այլ ամենայն հույները, իսկ Պլատոնն ասում է, թե ինչպես պետք է քաղաքականություն վարելե [3: 100]:

ինչպիսին է հայոց ինքնության, բովանդակ կյանքի ու մշակույթի եղելումի իրադարձությունների ու գործերի բոլորաքանակ ու փաստագրված, և այդկերպ՝ բոլորապատում և նույնիսկ էական պատմությունը: Իհարկե, Մովսես Խորենացին պատմում է ոչ բոլորապատում, այլ՝ **էական պատմություն**, սակայն էականը՝ և՛ պատմության իր հայեցակարգի, և՛ այդ հայեցակարգով իր պատմելիքի (պատմվող բովանդակության) համար որոնում է ոչ միայն, ըստ Արիստոտելի, **եղելական և հենց իրեն առձեռն բոլոր պատմությունների՝ ակտուալացած (իրագործված) առանձնահատկությունների մեջ**, այլև, ըստ Պլատոնի, կյանքում գուցե և փաստացի չիրագործված՝ պատմության **իդեական կերպավորության առանձնահատկությունների, թեև ոչ նույնորեն, սակայն՝ ևս իրական հնարավորությունների տեսադաշտում**: Քանզի սկզբունքորեն իրական է ոչ միայն եղելականը, ակտուալացածը, այլև պոտենցիան, հնարավորը: Մովսես Խորենացու մոտեցումը **պատմության՝ իրենում էական հիմնախնդիրներ պարունակող խնդրակարգին**, որում և՝ պատմության տեսությանը, հասկաց(ված)ությանն ու հայեցակարգին և պատմության հայեցակարգով տեսանվող կյանքի եղելումի իսկությանը, ըստ էության, **ստեղծագործական է**, ընդ որում, ոչ կամայածին և–կամ մտացածին, այլ՝ իսկության բացորոշմանն, ըստ մարդկային կարողության, բուն ուղղորդվածություն և հենց դիտավորություն ու կատարում ունեցող ստեղծագործականությամբ:

Հայոց ինքնության, կյանքի ու մշակույթի ոչ բովանդակ, այլ՝ **նշանակալի եղելումի** իսկությունը և ընդսմին՝ այդ նշանակալիությունը ևս բացահայտելով, և ուրեմն՝ **այդ նշանակալի եղելումի ու իր նշանակալիության բացահայտությունը որպես էական պատմություն հյուսելով**, իսկության նրա որոնումը և պատմագիտական հայեցակարգը, պլատոնյան մոտեցմանը հանգույն, **գործնական ու տեսական** ուսումնասիրություն, բացահայտություն ու պատասխան է նաև **պատմության բարենորոգության** միտող այն հարցին՝ թե **ինչպիսի՞ն՝ առավել նախընտրելի ու պիտո, կարող է լինել պատմությունը**: Եվ նրա «Պատմութիւն Հայոց» աշխատության ողջ բովանդակության մեջ, թեև ոչ բացորոշ ձևակերպմամբ, և, այնուամենայնիվ, կարմիր թելով անցնում, ծավալվում և իր լուծման մեջ՝ իմաստության ուսումնասեր հասկացման ու խորհրդածության սիրուն ու հետազոտությանը մատչելի ու պարզորոշ է դառնում հետևյալ խնդրակարգը՝ **բացահայտել հայոց պատմության որպես այդպիսին գոյության իսկությունը՝ մարդկային ու հենց հայոց ինքնությանն ու մշակութային կենսակերպին իր նախընտրելի ու պիտոյական նշանակալիության ներկայացմամբ**:

Մեկնողաբար բացահայտելի նրա հայեցակարգն ու բաղադրատարր լուծումները և ըստ այդ հայեցակարգի՝ պատմվող բովանդակությունը, ըստ էության, պատասխան են ոչ սոսկ այն մեկ պարզ հարցին, թե՝ «ինչպիսի՞ն է հայոց պատմությունը», այլև այն հարցերին, թե՝ «ինչպիսի՞ն կարող է ու նախընտրելի, որ լինի պատմությունը և կոնկրետորեն՝ հենց հայոց պատմությունը որպես այդպիսին»: Նրա պատմագիտական հայեցակարգը և ողջ երկը պատասխան է այն հարցին, թե՝ «ինչպիսի՞ն է պատմության և կոնկրետորեն՝ հայոց պատմության որպես այդպիսին գոյության իսկությունը, որը համապատասխան է նրա **բուն կոչմանը**, այսինքն՝ իմանալի, ըստ մարդկային կարողության, **պատմության աստվածային նախակոչվածությանը**»:

Նրա պատմական երկը՝ ամենայն իր բովանդակությամբ, պատասխան–բացահայտություն է վերոբերյալ խնդրակարգ–հարցի, թե՝ «ինչպիսի՞ն է հայոց պատմության որպես այդպիսին գոյությունը՝ մարդկային ու հենց հայոց ինքնության հոգևոր կեցողությանն ու մշակութային կենսակերպին իր նախընտրելի ու պիտոյական նշանակալիության բացահայտությամբ»:

32. Նրա պատմատեսությունը ոչ իր ամբողջության մեջ և ոչ էլ նույնիսկ իր բաղադրատարրերում սոսկ չի նույնանում նախկին հայեցակարգերին: Պատմատեսության կամ պատմագիտության նախկին հայեցակարգերից պատմության իդեան ու դիտավորությունը, մոտեցումը, սկզբունքներն ու չափորոշիչները նա չի վերցնում միշտ նույնությամբ: Մովսես Խորենացին պատմության առկա տեսություններին իր քննական մոտեցման մեջ այդ ամենի՝ պատմության իդեայի, դիտավորության, մոտեցումի, սկզբունքների ու չափորոշիչների, բովանդակ խնդրակարգում իրագործում է պատմվող նյութի ոչ սոսկ քննական պատմաքաղություն ու ի մի հավաքում: Պատմահայրը պատմության իդեայի իր տեսանության կամ դիտավորության և ըստ այդ դիտավորության՝ նաև կերպարանման ու կատարումի բովանդակ խնդրակարգում և ուրեմն՝ կյանքի ամբողջական ու նրանում նշանակալի եղելումի նկատմամբ, ըստ մարդկային կարողության, բացության ու իմացության, որում նաև որպես գիտություն տեսականորեն կազմակերպվածության խնդրակարգում և լուծում–պատասխանում նկատի ունի և այլոց ևս տեսանել է տալիս **առ ճշմարտություն ու բարին, միով բանիվ՝ առ իմաստություն *սկզբունքորեն ու առավել բարեկարգության հնարավորություն***:

Պատմության իմաստասիրությունում և–կամ պատմության տեսությունում պատմության գոյության՝ **եղելական** դրսևորումներից առավել **հնարավորությունների և հենց նախընտրելի կերպի** վերաբերյալ խորհրդածությունների, դիտավորության, ըստ այդմ՝ կերպարանման ու կատարումի՝ իրենց ամբողջությամբ կամ մասնակի լուծումներում, բազում նշանակալի և երբեմն առինքնող օրինակներ են կենագործվել պատմագիտության կայացման ողջ ընթացքում՝ և՛ պատմիչների կամ պատմաբանների (Հերոդոտոս, Թուկիդիդես, Պլուտարքոս, Հերդեր, Դրոյզեն, Ռանկե, Մ. Բլոկ, Լ. Ֆևր, Ֆ. Բրոդել, Ռ. Քոլինգվուդ և այլոք), որոնցում նաև պատմաբան ու աստվածաբան եկեղեցու հայրերի (Եվսեբիոս Կեսարացի, ս. Օգոստինոս, ս. Մովսես Խորենացի և այլոք), և՛ փիլիսոփաների ու հենց հերմենևտների (Հեգել, Բ. Կրոչե, Վ. Դիլթայ, Գ. Շպետ, Մ. Հայդեգեր, Հ.–Գ. Գադամեր, Պ. Ռիկյոր և այլոք), և՛ այլ մասնագետների կողմից: Հայտնի միջնադարագետ Մարկ Բլոկը գրում է. «Պատմությունը ավելի լավ հասկացման ձգտումն է, հետևաբար՝ մի բան, որ շարժման մեջ է: Սահմանափակվել գիտության ներկա վիճակի նկարագրությամբ՝ կնշանակի որոշակի չափով նրան թերագործության մատնել: Առավել կարևոր է պատմել այն մասին, թե նա ինչպիսին դառնալու հույս ունի հետագա իր զարգացման մեջ» [18: 11]: Մեկ այլ տողում նա գրում է. «Պատմությունը դեռևս այնպիսին չէ, ինչպիսին պետք է լինի» [18: 40]:

Ահավասիկ, Մովսես Խորենացին իր երկը գրելուց առաջ և ընթացքում մտածել ու մտածում է, այդկերպ նաև մեզ ուսուցանում, թե ինչպիսին պե՛տք է լինի պատմությունը և նրանում ասվածը՝ ասման բերված իրողության իմաստային բացահայտությունը, թե ինչն է, իր ստույգ իմաստով բացահայտված, արժանի ու

հարկավոր՝ այդկերպ կարգավորությամբ հյուսված իր պատմության մեջ ընդգրկել և հղել ամենայն «ընթերցասէր» և «ուսումնասէր» անձանց՝ առ ի ուսումն իմաստության, քաջության ու ամենայն առաքինության և օրինակյալ կատարելությամբ իրենց կյանքում կենագործության՝ ըստ մարդկային կարողության:

33. Իսկ ինչո՞ւ է սկզբունքային բանաձևմամբ ասվում, թե նա իր պատմությունը հյուսելիս՝ խորհրդածել է **պատմության որպես այդպիսին գոյության իսկության** վերաբերյալ: Նկատենք, որ հենց Մովսես Խորենացու դիտավորությունն է՝ իմաստությամբ տեսանել, հասկանալ ու մեկնողաբար բացահայտել՝ ի պատմություն հյուսմամբ, մարդկային ու հենց հայ ինքնության, կյանքի ու մշակույթի նշանակալի եղելումի իսկությունը: Եվ այդ կնշանակի, որ նրա դիտավորությունն է՝ ընդհանրապես՝ մարդկային ինքնության և կոնկրետորեն՝ հենց հայ ինքնության ու կյանքի եղելումի նշանակալիության և ուրեմն՝ **պատմության ու նաև պատմողության իմաստուն գիտեցմամբ ու արվեստավորությամբ**՝ ուսուցանել աշակերտել և հասկանալ ձգտող յուրաքանչյուրին՝ ժամանակակիցներին ու սերունդներին, պատմել ամենայն «ընթերցասէր և ուսումնասէր»–ին հայոց ինքնության, կյանքի ու մշակույթի նշանակալի եղելումի իսկություն, ընթերցասեր ուսմամբ առ իմաստություն կոչելով ու կրթելով: Ինչպես և իր աշխատության մեջ իրագործում ու նաև ուղղակիորեն հայտնում է մեր սուրբ ու իմաստուն Պատմահայրը և այսկերպ՝ նույնի կոչում յուրաքանչյուր ազնիվ պատմիչ անձի, իր երկում սիրով ու ջանքով ճշմարտաբար պատմելով անսուտ պատմություն՝ **իրերի ու գործերի իսկություն հայտող իմաստ և այդ իմաստում՝ իմաստություն,** ըստ էության, իր պատմումի կերպի ու պատմությամբ ասացյալի ուղղակի ու նաև այլաբանող նշանակությամբ հյուսում է **հայոց ազգի գոյության և իմաստուն հոգևոր կեցողության** համար անհրաժեշտ ու նաև նախընտրելի տեսնվող **պիտոյից պատմություն**՝ սերունդներին «ի իմաստացում» : Մարդկային ու ազգային կյանքում նա տեսնում էր **բարեկարգության կարիք: Եվ այս կարիքը «լցնելուն» է նպատակամետ նրա հայոց պատմությունը:** Դիտավորություն, կերպարանում ու կատարում ունենալով պատմել հայոց մեծաց ծննդոց, իմաստության ու քաջության գործերի եղելությունը, ըստ էության, նա իրագործում է մարդկային ինքնության և կյանքի գոյության համար կենարար ու էականորեն նշանակալի իմաստության աջակցություն կամ «օժանդակութիւն»՝ պատմությամբ բացահայտմամբ և գրով ամրագրմամբ ժամանակակիցներին ու սերունդներին հաղորդելով **իմաստությունն ամենայն պիտոյից** [4: 34–40; 1: 30–43][1] և՛ այն, որ ներկա էր մեր նախնյաց կյանքի եղելություններում, և՛ այն, որ կա այլուստ արտաքին՝ մեզանում «օժանդակութիւնս իմաստից» ներածելու օգտակար ու պիտանի [8: 6]:

Կարելի է նաև ասել, որ հայոց իմաստուն Պատմահայրը պատմության իր տեսության և–կամ պատմագիտության իր հայեցակարգի, պատմումի կերպի ու պատմությամբ ասացյալի կոնկրետ օրի-

[1] Հռետորության մեջ «պիտոյ»–ի սահմանման և բանական, գործնական ու խառը (բանական ու գործնական) սեռերի զանազանության մասին՝ օրինակներով հանդերձ տես [4: 34–40; 1: 30–43]: Իր «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ, սակայն, Մովսես Խորենացին «պիտոյ»–ի հասկացությունն ըմբռնում ու գործածում է այդ հասկացության վերաբերության պոտենցիայի ընդարձակ և հենց առավելագույն բովանդակությամբ ու ծավալով, այն է՝ մարդկային ողջ կյանքին՝ ինքնությանն ու կենսակերպին առնչվող և հենց այդ առնչությամբ իմանալի ու սահմանելի նշանակությամբ:

նակով անուղղակիորեն հյուսում է նաև մարդկանց այլ ևս ազգերի գոյության և իմաստուն հոգևոր կեցողության համար անհրաժեշտ ու նաև նախընտրելի տեսնվող **պիտոյից պատմության կերպորինակ**՝ հնարավորություն ընձեռելով նաև այլոց «ընթերցասէր» և «ուսումնասէր» սերունդներին՝ իրենց սեփական կենսակերպի ու ինքնահասկացող պատմության խորհրդում ու գործում իմաստացման:

Իսկ ինչո՞ւ է ասվում «կերպորինակ»: Աստվածաշունչը Աստծո Սուրբ Հոգով կենագործյալ՝ իսկությունն ու բնորինակ պատմությունն է արարչագործության, աստվածային նախախնամության ու մարդկանց կյանքի, և որպես միակ ճշմարիտ այդպիսին՝ այն **ամենայն սքանչելյաց ու պիտոյից պատմություն է**: Աստվածաշունչ Մատյանը և՛ **ամենայն սքանչելյաց պատմություն է**՝ աստվածային իրողությունների և մարդկային իրողություններում՝ աստվածային ներկայության, նախախնամության ու փրկագործության իսկություն հայտնող, **և՛ պիտոյից պատմություն**՝ Աստծով սքանչության հասանելու համար անհրաժեշտ, օգտակար ու նախընտրելի պիտոյից: Սուրբ Գիրքը ներկայանալով որպես ամենայն սքանչելյաց ու պիտոյից պատմություն, որպես այդպիսին՝ իր կոչմամբ ու իսկությամբ մարդկանց ազգերի հոգեկեցույց կենսակերպի իմաստության ուսուցանություն է: **Աստվածաշունչը աստվածային ու մարդկային իրողությունների իսկության պատմություն է, բնորինակն այդ պատմության՝ շնորհյալ մարդկային բանական հոգու հավատի և մտքի հասողության կարողությանը**:

Իսկ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»–ը պիտոյից պատմության մի կերպորինակ է, աստվածային նախախնամությամբ ուղղակիորեն հղված հայոց ազգին և անուղղակիորեն՝ այլ ևս մարդկանց ազգերին՝ իրենց կյանքի ու պատմության դիտավորության ու կատարումի, սեփական կենսակերպի և պատմումի ու պատմվողի հայեցակերպի իմաստացման հնարավորությամբ: Իսկ կարո՞ղ է լինել, արդյոք, իմաստացում, եթե ընթերցելով «Պատմութիւն Հայոց»–ը, ճշմարտությամբ «ուսումնասէր» և «ընթերցասէր» ընթերցողն ի միտ չի առնում և հասու չի լինում պատմիչի ոչ–կամայածին հասկացման ու պատմումի այն կերպին, որով և ընթերցող մտքի ուշին «յանդիման է կացուցանվում» [8: 7] «իրերի ու գործերի» իսկությունը՝ «զորութիւնն» [8: 45], «զուստն և զգիարդն» [8: 7], ինչն էլ հնարավորություն է ընձեռում ընթերցողին՝ հաղորդ և ընկալ դառնալ **իրերի որպիսության ու պատճառի իսկությունը** գիտեցող նույնորոշելի ու կրկնորոշելի իմացության, այսինքն՝ իրերի ու գործերի իսկությունը գիտականորեն գիտեցող պատմության: Նկատենք, որ հենց Մովսես Խորենացու դիտավորությունն ու ակնկալիքն է՝ ընթերցասեր և ուսումնասեր յուրաքանչյուր անձ ճգտի հասկանալ ու խորհրդածել **պատմության կոնկրետ բովանդակությունում կամ պատմությամբ կոնկրետաբար ասվածում պահյալ իմաստության** հետ մեկտեղ, դրան նախընթացությամբ ու նաև զուգընթացությամբ, **պատմության սկզբունքային կոչման ու որպես այդպիսին գոյության իսկությունը**, այդկերպ՝ ըստ մարդկային կարողության, միշտ նախկինի համեմատ փոքր ի շատե **առ ի մի և առ ի լրումն** կայացնելով պատմությամբ ի հայտ իմաստության կոչումը, կատարումն ու կատարելությունը:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 01.10.2012 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գիրք Պիտոյից, աշխ. Գ. Մուրադյանի, Եր., 1993:
2. **Դանիելյան Ն.,** Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»–ի պատմահոգևոր համակարգը և Աստվածաշունչը, Եր., 2011:
3. **Դաւիթ Անյաղթ,** Սահմանք իմաստասիրութեան – Երկասիրութիւնք փիլիսոփայական, աշխ. Ս. Արևշատյանի, Եր., 1980:
4. **Թէովն,** Յաղագս ճարտասանական կրթութեանց, Եր., 1938:
5. **Թոփչյան Ա.,** Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը, Եր., 2001:
6. **Խուդինյան Գ.,** Տարեգիրների ժամանակը [խմբագրական] – «Վեմ» համահայկական հանդես, 2011 թիվ 1 [33] հունվար–մարտ, էջ 3–11:
7. **Ղևոնդ Ալիշան,** Մովսես Խորենացի և իր հայոց պատմությունը – Երկեր, Եր., 1981:
8. **Մովսէս Խորենացի,** Պատմութիւն Հայոց, Եր., 1991:
9. **Մուշեղյան Ա.,** V դարի հայ մատենագրության ժամանակագրական խնդիրներ, ատենախոսություն՝ բանասիր. գիտությունների դոկտորի գիտ. աստիճանի հայցման համար, Եր., 1996:
10. **Մուշեղյան Ա.,** Մովսես Խորենացու դարը, Եր., 2007:
11. **Սարգսյան Գ.,** Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» ժամանակագրական համակարգը, Եր., 1965:
12. **Քոչարյան Ռ.,** Հանս–Գեորգ Գադամերի փիլիսոփայական հերմենևտիկան, Եր., 2006:
13. **Քոչարյան Ռ. Խ.,** Պատմության մեկնողականությունը և Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատության իմաստասիրող առանձնահատկությունը, գ. Օշական, 1998թ. կոնֆերանսում կարդացված զեկուցման հոդվածային տարբերակը – «Ռուբիկոն», Եր., 2/10/2006, էջ 4–12:
14. **Քոչարյան Ռ. Խ.,** «Պատմութիւն Հայոց»–ը և պատմության գոյավորության առանձնահատկությունները, գ. Օշական, 1999թ. կոնֆերանսում կարդացված զեկուցման հոդվածային տարբերակը – «Ռուբիկոն», Եր., 2/10/2006, էջ 14–21:
15. **Քոչարյան Ռ. Խ.,** Փիլիսոփայությունը և իսկության խնդիրը, «Բանբեր Երևանի Համալսարանի /հաս. գիտ./» 1998, հ. 1 /94/:
16. Аристотель, Поэтика, пер. Гаспарова М. Л. – Сочинения, М., 1984, т. 4., с. 645–680.
17. **Аристотель**. Риторика, Поэтика, пер. и примеч. Цыбенко О. П. [Риторика] и Аппельрот В. Г. [Поетика], М., 2000.
18. **Блок М.** Апология истории, М., 1986.
19. **Гадамер Г. Г.** Человек и язык – От Я к Другому, Минск, 1997, с. 130–142.
20. **Гадамер Г. Г.** История понятий как философия – Актуальность прекрасного, М., 1991, с. 26–43.
21. **Гадамер Х. Г.** Истина и метод. М., 1988.
22. **Гуревич А. Я.** М. Блок и «Апология истории» – М. Блок, Апология истории, М., 1986, с. 182–231.
23. **Тахо–Годи А. А.** Ионийское и аттическое понимание термина “история” и родственных с ним – Тахо–Годи А. А., Лосев А. Ф. Греческая культура в мифах, символах и терминах, СПб., 1999, с. 443–458.
24. **Тахо–Годи А. А.** Эллинистическое понимание термина “история” и родственных с ним – Тахо–Годи А. А., Лосев А. Ф. Греческая культура в мифах, символах и терминах. СПб., 1999, с. 459–483.
25. **Шпет Г. Г.** История как предмет логики – Историко–философский ежегодник 1988, М., 1988, с. 290–320.
26. **Ricoeur P.,** The hermeneutical function of distanciation – Hermeneutics and the Human Sciences, Cambridge, 1982, p. 131–144.
27. **Ricoeur P.,** The model of the text: meaningful action considered as a text – Hermeneutics and the Human Sciences, Cambridge, 1982, p. 197–221.

ПРОБЛЕМАТИКА ИСТОРИИ В ИСТОРИКО–НАУЧНОЙ КОНЦЕПЦИИ МОВСЕСА ХОРЕНАЦИ

КОЧАРЯН РОМИК

Старший научный сотрудник института древних рукописей Матенадаран имени св. Месропа Маштоца

В данной статье герменевтической методологией, интерпретативно–философским анализом раскрывается фундаментальная проблематика историко–философской концепции Мовсеса Хоренаци. Принципиально и сущностно понять историю – значит понять истину «сказанного» в историческом тексте и понять в нём истинное значение, и затем понять мудрость этого значения. Выявлена фундаментальная проблематика истории в труде Мовсеса Хоренаци: «понимание и интерпретативная экспликация значения бытия истины истории как таковой, а также совет мудрости в этом значении». Эта всеохватывающая и полная проблематика состоит из двух тесно сплетённых компонент: понимание и интерпретативная экспликация, прежде всего концепции науки истории и затем мудрости содержания в исторически «сказанном», т. е. в истине бытия истории как таковой, в общем, и истории Армении, в частности, – с точки зрения этой концепции науки истории.

Дата представления статьи: 01.11.2012 г.

THE PROBLMATICS OF HISTORY IN HISTORICAL–SCIENTIFIC CONCEPTION OF MOSES KHORENATSI

ROMIK KOCHARYAN

Senior Research Associate Matenadaran The Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts

The fundamental problematics in the historical–philosophical conception of Moses Khorenatsi is revealed in this article, using hermeneutical methodology and, as such, by the help of interpretative philosophical analysis. To understand history principally and essentially means to understand the genuine “said” by historical text and to understand truth–denoting–meaning and then to get the advice of wisdom in the meaning. It is revealed the fundamental problematics for the history of Moses Khorenatsi: “understanding and interpretively explicating the meaning of the truthfulness of history as such, as well as the advice of wisdom in that meaning”. This all–embracing and complete problematics consists of two components: understanding and interpretively explicating, first of all, the conception of history–science and then the wisdom of content in the historically “said”, that of truth–of–being of history as such, in general, and concretely of history of the Armenians – viewed by this conception of history–science.

Article submission date: 01.11.2012